Արդ ընդէր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս ❋ յուսա՛ առ Ած, խոստովանեսցուք նմա ❋ փրկիչ երեսաց իմոց Ած է:

Տուն. 13.

Սաղմոս Դաւթի:

Սաղմոս. ԽԲ:

Դատ արա՛ ինձ Ած ❋ և իրաւ արա՛ ինձ ՚ի դատաստանի իմում:



իմ Թշնամիքն զորն ՚ի բուն կամին խոտորել և անկանել ասել թէ ո՞ւր է քո Ած, որ դու յուսացեր ես, եր քեզ յօգնութիւն չէ հասանիր, և զքեզ մխիթարէր:
Նոյնպէս, բայց դու ով հոգի իմ, ինչի համար կու տրտմիս, եւ զիս կու խռովեցնես և կու շփոթեցնես ❋ յուսացիր յԱծ, և խոստովանիր իւր որ անուննե ❋ զի է իմ երեսին փրկողն և յուսանք բաղնաստ և ՚ի համբերելութեանն Ած է, ասա իւր շնորհքն և ողորմութիւն զիս ՚ի մեղաց կու ազատէ, և անոր իւր երանական տեսութիւն զիս կու փառաւորէ:

Իբր, զայս սաղմոս ինքն դաւիթ մարգարէն է շարադրեալ:
Նոյս սաղմոսաւն կու խօսի մարգարէն թէ ինչպէս որ ծառայքն զիւրեանց տէրն կու աղաչարարեն ՚ի որ սեղանն ամաչելոյ համար, կամ երկինքից արքայութեան մտանելոյ համար:

Նոյնպէս, զիմ դատաստանս դու արա՛ տէր Ած իմ Թշնամեացն հետ, որ արդար դատաւորես ❋ և երբոր դատաստան կումտանես, զիս մի՛ դատապարտեր, այլ իրաւունք արա՛, և զիմ խղճմութիւնս և անմեղութիւնս

ամե

ամենեցուն յայտնի արար.
Աստուածիմ, այն ազգէն որ սուրբ և աստուածային չէ, եթէ ի դիւաց և յանհաւատից. այն մարդէն որ մեղաւոր և նենգաւոր և խաւարեալ է, զիս փրկէ և ազատէ.
Աստուածիմ, դու Տէր Ած, ի ծննդենէն մինչև յայսօր իմ կարողութիւն և ուժն ես, այժմ եր զիս քոյ Ածային մխիթարութենէն զրկեցիր, և մերժեցիր. կամ թէ եր կու թողուս որ ես տրտում շրջիմ գամ, երբ որ իմ երևելի և աներևոյթ թշնամին զիս կունեղացնէ և կու փլացնէ.
Աստուածիմ, ուղարկէ խնամ Տէր Ած քո երկնային շնորհաց լոյսն, և քոյ ոչ հաւատոյ ճշմարտութիւն. որ խնամ առաջնորդեն և ճանապարհ ցուցանեն այս անցաւոր և խաւարեալ աշխարհուս. զիս հանեն ի քո Տէր լեռը. եթէ ի քո Տէր եկեղեցին, ի քո Տէր տաճարը, և ի քո երկնային բնակարանը.
Աստուածիմ, և ես ի քո ողորմութեան ապաւինելով յորդորեմ զիս և ամէն, թէ մտանեմ ով Տէր սեղանի առաջևն, մանանալիցընելով իմ երկնային խնդութեանն, և իմ երանելի սիրութեանն. և մօտենամ առ Տէր Ած, որ զիմ մանկութիւն կուրախացնէ, եթէ զիմ հոգին կուզօրացուցանէ, զիմ բնութիւն

մա

Յազգէ որ ոչ է սուրբ. ի մարդոյ մեղաւորէ և նենգաւորէ փրկեա զիս.

Զի դու Ած հզօր իմ ես, ընդէր մերժեցեր զիս. ընդէր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ.

Առաքեա Տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո. զի առաջնորդեսցեն ինձ. հանցեն զիս ի լեռան Տէր և ի յարկս քո.

Մտից առաջի սեղանոյ քոյ. առ Ած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ.

Խոստովան եղեցից
օրհնութեամբ ա̃ծ,
ա̃ծ իմ։

Ընդ էր տրտ
ում ես անձն իմ,
կամ ընդ էր խռովես
զիս * յուսա՛ առ ա̃ծ
խոստովանեսցուք նմա *
փրկիչ երեսաց իմոց
ա̃ծ է։

Տաղ. Գ.

Ի կատարած որդւոցն Կոր
խայ սաղմոս խրատութե։

Սաղմ. ԽԳ.

Ա̃ծ ականջօք մե
րովք լուաք
* և հարքն



մանուկ ազգայինն նման կու տրտմի
և կու անհանգստացուցանէ։
Ա՛յսինքն, և քու սուրբ անուանդ
համապատ խոստովանիմ օրհնե
լով և փառաբանելով զքեզ իմ
ա̃ծ ամէն աշխարհին, և ա̃ծ իմ։
Ա՛յսինքն, և ասեմ իմ հոգւոյս
թէ իմ հոգի իմ, էր կու տրտմիս
կամ էր զիս կու խռովեցուցանես
* յուսացիր ա̃ծ, և խոստովանիր
իւր սուրբ անունն * զերէ իմ
երեսաց փրկիչն և յուսացողին
ա̃ծ է թէ ասէ թէ 'ի հանդերձ
եալն իւր սուրբ արքայութեան
մէջն։

Երբ, զայս սաղմոսս շարադրեց
դաւիթ մինչև 'ի վերջն կորխայ
որդւոցն համար որ նոքա երգեն,
և ասէ սաղմոս խրատութե, վ̃ն
ցուցանելոյ թէ խորին է և խորհր
դաւոր։
Ա՛յս սաղմոսաւն կու խօսի մար
մարգարէն վասն անջրպետեն հին
հարցն, և վասն վշտաց առաջին
քրիստոնէիցն, այսինքն, առաքե
լոց և մարտիրոսաց, որ կու աղաղա
կէին առ ա̃ծ ասելով։

Այսինքն, ով ա̃ծ թէպէտ
մեք մեր ականջօքն չի տե
սանք, բայց մեր ականջն

ջունն մեր լուա միջէ լսեցինք * և մեր առաջին նախահարքն թէ գրով և թէ աւանդութեամբ մեզ պատմեցին.

Այսինքն, այն զարմանալի գործքերն, այն յաղթութիւնքն, այն նշաններն, և արհեստներն որ նոցա ժամանակումն գործեցիր * յառաջ քան զգալուստն քրիստոսի կամ պաշտպանեց երկիրներումն.

Այսինքն, քո զօրեղ ձեռքդ մին անեց և հանեց յաւետեաց երկրէն այնքան կռապաշտից ազգերն և զմեր նախահարքն տնկեցիր և հաստատեցիր * պատժեցիր և չարչարեցիր զանառաջն ազգաց ժողովրդներն, և քշեցիր և հալածեցիր յիւրեանց երկրէն.

Այսինքն, չէ թէ մեր նախահարքն իւրեանց թրովն ժառանգեցին և տիրապետեցին այն երկիրներին * կամ թէ իւրեանց կանե րի ուժն զիւրեանք փրկեց կամ պաշտա ազգերի ձեռքէն.

Այսինքն, այլ քո աջ ձեռքդ, և քո զօրեղ կուռդ, և քո երեսիդ լոյսն. իւր քո զութքդ և քո ողորմութիւնդ փրկեց և պահեց զիւրեանք * զէրէ հաճեցար և սիրեցիր զնոսա քո անչափ բարութեանդ և քաղցրութեանդ համար.

Այսինքն, ում կու յուսամ որ իմն այլ խնամք առանձին նորա

նման



մեր պատմեցին մեզ.

Օ գործս զորս գործեցեր յաւուրս նոց * յաւուրսն առաջինս.

Ձեռն քո խլեաց զհեթանոսս, և զնոսա տնկեցեր * չարչարեցեր զժողովուրդս, և հաներ զնոսա.

Ոչ եթէ սրով իւրեանց ժառանգեցին զերկիր * և ոչ բազուկ նոց փրկեաց զնոսա.

Այլ աջ քո, և բազուկ քո, և լոյս երեսաց քոց * զի հաճեցար ընդ նոսա.

Դու ես ինքն ես թագաւոր իմ և Աստուած իմ *

որ հրամայես զփրկու-
թիւն յակոբայ .

Քև զթշնամիս մեր հարցուք * և անուանմբ քով արհամարհեսցուք զյարուցեալսն ի վեր մեր .

Ոչ թէ յաղեղն իմ յուսացեալ եմ * և ոչ սուր իմ կեցուցանէ զիս .

Այլ դու փրկեցեր զմեզ ՚ի թշնամեաց մերոց * և զատելիս մեր յամօթ արարեր .

Աստուծով պարծեսցուք զօր հանապազ * և անուանն նորա խոստովան եղիցուք յաւիտեան .



նանն , զի՛որ դու խնդրեցես որ նոցա տոՙրն և պահպանութեն եղիր , այսպէս այլ իմ թագաւորն և տէրն ես * որ կու հրամայես և կու հոգաս յակոբայ փրկութիւն . իբր քոյ ժո- ղովրդիս հաւատացելոց հոգևոր և մարմնաւոր ազատութիւն .

Այսինքն , որ մեք այլ քո օգնու- թեամբ մեր երևելի և աներևոյթ թշնամիքն յաղթենք հալածենք և յամօթ անենք * և քոյ տէր անո- ւանդ զօրութեամբ իշխենք հանա- րենք զայնոսիկ որ անիրաւութեա- նութեամբ մեզ վեր կու վազեն .

Այսինքն , և ոչ թէ յուսացեր եմ ես իմ աղեղն . իբր իմ ձեռ- բազկաւորութիւն * կամ թէ ապաւէ- նեմ եմ իմ թուրն . իբր իմ ձեռք- տարափառութիւն , որ զիս փրկէ իմ երևելի և աներևոյթ թշնամեաց ձեռքէն .

Այսինքն , այլ թէ դու քոյ օգ- նութեամբ մեզ ՚ի թիկունս հասա- նես , մեք կու խոստովանենք , թէ դու փրկեցիր զմեզ մեր թշնա- մեաց ձեռքէն * և զմեր ատելիքն կոտր ձգեցիր և ամաչեցուցիր .

Այսինքն , և զամենայն յօրդորել քով կանենք , թէ աստուծով պար- ծենանք հանապազ * և նորա տէր անուանն խոստովանենք յաւի- տեանս յաւիտենից , զերէ նա է մեր տէրն և պահպանողն .

Այս

Այսինքն , բայց այժմ դու զմեզ վասն մեր անարժանութեան յերեսաց ձգեցեր և անարգեցեր * և չուզեցեր մեր զօրացն հետ կռիւ գալ . ինչ չուզեցեր մեզ օգնութիւն անել , և մեզ հետ ընդէմ մեր թշնամեացն պատերազմել , և ազատել զմեզ :

Այսինքն , զմեզ քան զմեր թշնամիներն այլ՝ աւելի կոտր ձգեցեր , և ամօթով յետ դարձուցեր * և մեր ատելիքն զմեր ապրանքն և զ հայրենիքն խլեցին և յափշտակեցին , և զմեզ խեղճ և ողորմելի արարին .

Այսինքն , զմեզ անմեղ ոչխարների նման 'ի մահ մատնեցեր , և բաժանել տուիր * և կռապաշտից և այլազգեաց երկիրներումն ցիր և ցան արարիր , և նոցա ձեռաղանդ և հարկատու շինեցեր .

Այսինքն , քո ժողովուրդդ անպէտք իրեղինի նման ծախեցեր առանց գնոյ . ինչ մատնեցեր 'ի ծառայութիւն անհաւատից * և մեր լացին և աղաղակին թիւ և համար չի՛ մնաց .

Այսինքն , զմեզ մեր դրացին ազգերի միջումն նախատինք և ամօթ արարիր * և մեր բոլորի եղած մարդկանց առաջին ծիծաղատեղ , և անարգանաց շինեցեր .



Բայց արդ մերժեցեր և անարգեցեր զմեզ * և ոչ ելեր ած ընդ զօրս մեր .

Դարձուցեր զմեզ յետս քան զթշնամիս մեր * և ատելիք մեր յափշտակեցին զմեզ :

Տուեր զմեզ որպէս զոչխար 'ի պատառումն * և ընդ հեթանոսս ցրուեցեր զմեզ :

Վաճառեցեր զժողովուրդ քո առանց գնոյ * և ոչ գոյ թիւ աղաղակի մերոյ .

Արարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց * ծաղր և այպն կատականաց այնոցիկ որք շուրջ են զմեօք .

Արարեր զմեզ յա ռակս հեթանոսաց * 'ի շարժել զգլուխս ժողովրդոց.

Զօր ամենայն նա խատինք իմ առաջի իմ են * և ամօթ երե սաց իմոց ծածկեաց զիս.

Ի ձայնէ նախատո ղին, և չարախօսի * յերեսաց թշնամւոյն և հալածչի.

Այս ամէն եկն 'ի վե րա մեր, և մեք զքեզ ոչ մոռացաք * և ոչ անար գեցաք ուխտի քում * և ոչ դարձաք յետս սր տիւք մերովք.

Դու արձակեցեր զշա ւիղս մեր 'ի ճանապար հաց քոց * խոնարհ արարեր զմեզ 'ի տե ղի չարչարանաց * և ծածկեցին զմեզ ստ ուերք մահու.



Այսինքն, զմեզ անհաւատից և կռապաշտից առակ և բանենք արարեր * և այլազգի ժողովրդոց զգլուխն մեր վերայ դիբուրք ասա ռնէին. իբր անարգանաց արարեր.
Այսինքն, որն 'ի բոլոր իմ նախա տինքն և անարգանքն իմ առաջիս առաջին է * և իմ երեսս ամօթն այնչափ շատացաւ որ կոխեաց և ծածկեաց զիս.
Այսինքն, ինձ նախատինք առնո ղին և վատաբանողին ձայնէն և ապա ղակէն կու հալիմ և կու մաշիմ * և իմ թշնամւոյս դառն երեսէն և զիս հալածողի ձեռքէն հանապազ կու երկնչիմ և կու տագնապիմ.
Այսինքն, այս ամէն փորձանքս մեր վերայ եկաւ, և մենք զքեզ ամենևին չեմ մոռացանք * բանու թեան և քո ուխտքն կատարելքն անշնորհաբանք չեղանք, և չէ՛ հակա ռակեցանք * և մեր սիրտն բերան նից չէ՛ հեռացուցինք, և յետս չէ՛ դարձանք.
Այսինքն, դու մեր հանդերձաւո րթէ և խոնարհութէ ապարերեր առ վերակեան կերպին և եղանակին 'ի քո նախախնամութեան և որոշ մութե ձանձրացուցեր յետս դար ձուցիր և հեռացուցիր * ծածկա ցուցիր և ածեցիր զմեզ մեծամեծ չարչարանաց և վշտաց մէջն * և մահուան շուքն զմեզ ծածկեց

երբ զանազան փորձանքներն և
պատուհասներն զմեզ պաշարե
ցին և պատեցին ։

Մաղթեմք, բայց թէ մենք մոռա
ցանք այն նեղութէն մէջն զմեր տէր
անունն * կամ թէ տարածեցինք
մեր ձեռքն դէպ 'ի կռապաշտից
յօտար ածներն ։

Մաղթեմք, այդ ած իր արդա
րութէն կու հարցանէ և կու դա
տէ * զէրէ նա կու քննէ մեր սրտի
գաղտնի և ծածուկ խորհրդ
ներն ։

Մաղթեմք, դու խոց գիտես տէր
ած, որ մենք քո ոչ հաւատարիմ
սիրուն համար որն 'իբրուն կու չար
չարվինք և կու մեռանինք * և այն
պէս էնք դարձեր, ինչպէս ոչխար
մի որ պատրաստած ըլնին մորթե
լոյ և սպանանելոյ համար ղասաբ
խանոց մէջումն ։

Մաղթեմք, արթնացիր, էր կու
քնես տէր ած, իբր զմեր խղճութին
միտքդ արա՛ և մի՛ մոռանար * մեր
կաց և զմեզ ամենևին յերեսաց
մի՛ ձգեր, իբր զմեզ 'ի քու շնոր
հացդ և 'ի քո նախախնամութեդ
մի՛ զրկեր ։

Մաղթեմք, էր կու դարձուցանես
երեսդ մեզանից, իբր էր զքո նա
խախնամութին մեզանից կու հե
ռացնես * մի թէ կու մոռանաս
զմեր աղքատութին և զնեղու



Եթէ մոռացեալ իցէ
մեր զանուն Տն Այ մերոյ
* կամ ձգեալ իցէ
զձեռս մեր առ Ածս
օտարս ։

Ապայն Ած խնդրէ
զայս * զի նա քննէ
զգաղտնիս սրտից մե
րոց ։

Վասն քո մեռանիմք
զօր հանապազ * հա
մարեցաք ոպ ոչխար
'ի սպանումն ։

Զարթիր ընդէր էր
ննջես Տր * արի և մի՛
մերժեր զմեզ իս
պառ ։

Զի՛ դարձուցանես
զերեսս քո 'ի մէնջ *
մոռանաս զաղքատու
թի և զնեղութիս
մեր ։

Զի խոնարհ եղեն մինչև 'ի հող անձինք մեր * և յերկիր կցեցան մէջք մեր.

Արի տէր օգնեա' մեզ * և փրկեա' զմեզ վն անուան քո.

Տուն: 27.

'Ի կատարած զուարճացելոց ժամանակաց որդւոցն կորխայ խնամութիւն վասն սիրելւոյն:

Սաղմ. ԽԴ:

Բղխեաց սիրտ իմ

թիւն, զմեր տառապանսն և զնեղ-
ութիւն.

Այսինքն, մինչև ցածացաւ մեր անձն ցածացաւ խոնարհե-ցաւ, և հողը հաւասար եղաւ * և մեր մէջքն և բանականն գետնին կպաւ, իբր ոչինչ դարձանք աշ-խարհիս երեսին, և ոչինչ համար մնացանք, և ամենեցունց ոտից կո-խան եղանք.

Այսինքն, վեր կաց ուրեմն տէր, և մեզ օգնութիւն հասիր * և փրկէ և ազատէ զմեզ մեր երեւելի և աներեւոյթ թշնամեաց ձեռքէն քո սուրբ անուանդ համար, զի քեզ 'ի բերեղ միայն ենք յուսացեր, և միայն 'ի քո ողորմութիւնդ ենք ապաւիներ.

Իբր, զայս սաղմոս շարադրեաց դաւիթ շնորհօք և խնամութեան հոգւոյն սրբոյ, և ետ որդւոցն կորխայ որ երգեն փառս սիրելի և միածին որդւոյն այ քնի, որ յետ բազում ժամանակաց անցե-լոց գալոց է յաշխարհս առ 'ի փրկել զազգս մարդկան.

Այս սաղմոսովս կու խօսի մար-գարէն վն աստուածորդւոյն քնի, և վն եկեղեցւոյն հեթանոսաց, այսինքն կռապաշտից.

Այսինքն, իմ սիրտս հոգւոյն

որ յոյժ զօրութե̃ն լցեալ, և այպէսն նման խորհրդածոյ և բարի բանս բղխեաց * և կամիմ զգործս թագաւորի, երբ կամիմ զայս իմ շարադրական գործս՝ ի գովութի̃ն ճշմարիտ երկնաւոր թագաւորին։

Այսինքն, իմ լեզուս շուտով գրող գրագրի գրչի նման է, որ հոգին սուրբ խօսի տու լուսաւոր շարադրել * և կամի, մի քո գեղեցիկ ես դու հոգւով և մարմնով քան զամենայն հողեղէն մարդիկ որ աշխարհս փրկելոյ գալ։

Այսինքն, քո շրթունքներդ, երբ պատմեցին երկնային շնորք և խնամութիւն թափեցաւ, և սփռեցաւ աշխարհիս վերայ, և քո խօսքերն հիացոյց և զարմացոյց * և այդ քո բերանիդ քաղցրաբար խօսքերին համար քո հայրն ած զքեզ օրհնեց յաւիտեանս յաւիտենից, և մարդկային ազգիս վերայ ի գութ շարժեցաւ։

Այսինքն, քո թուրդ քո մէջքդ կապէ ով զօրեղ դու, զէնք պատերազմի պիտանի ընդ էմ սատանայի և ընդէմ իւր պաշտօնէիցն * զայն քո վայելչութե̃ն թուրն, կասեմ, երբ զքո ածային զօրութիւն, քո երկնային քաղաքութիւն, և քո բարձրանալեաց և հրաշագործութեանց թուրն կապէ քո մէջքդ։

զբան բարի * և ասեմ զգործս իմ թագաւորի։

Լեզու իմ որպէս գրիչ արագագրի դպրի * գեղեցիկ տեսլեամբ քան զա̃մ որդիս մարդկան։

Սփռեցան շնորհք՝ ի շրթանց քոց * վասն այսորիկ օրհնեաց զքեզ ած յաւիտեան։

Ած զսուր ընդ մէջ քո հզօր * վայելչութե̃ն և գեղոյ քո։

Լարեալ ուղղեալ և թագաւորեալ * վս̄ ճշմարտութեան և հեզութեան և արդարութեան * և առաջնորդեսցէ քեզ սքանչելապէս աջ քո.

Նետք քո սրեալք են հզօր * ժողովուրդք 'ի ներքոյ քո * անկցին 'ի սիրտս թշնամեաց թագաւորի.

Աթոռ քո ա̄ծ յաւիտեանս յաւիտենից * գաւազան ուղղութեան գաւազան արքայութեան քոյ.

Այսինքն լարէ քո ա̄ծայինն ողորմութեան աղեղդ, ուղղէ քո ա̄ծայինն խնամութեան նետերդ, և ձգէ և յաղթէ քո թշնամեացդ, և թագաւորէ նոցա վերայ * քո ճշմարիտ և փրկական խօսքերդ հաստատելոյ համար, դու քո խոնարհութեանդ և հեզութեանդ ցուցանելոյ համար, և դու արդար և չխառն դատաստանդ յայտնելոյ համար * և քո աջ ձեռքդ, երբ քո հզօրութեանդ ամենակարող զօրութիւնն զարմանալի կերպով դու գիտա-ւորութիւնդ 'ի բարին կառաջնորդէ.

Այսինքն, քո նետերդ սրած է ով զօրեղ ա̄ծ, երբ քո ա̄ծայինն և ճշմարիտ խօսքերդ սաստիկ սուր են և լսողաց միտքն կու մտանեն * և շատ ազգեր և ժողովուրդներ քեզ կու հնազանդեցնեն * զէրէ կու անկանին թագաւորի թշնամեաց սիրտն, երբ կու մտանեն հրէից և հեթանոսաց սիրտն, որ քեզ թագաւորիդ մերոյ յի̄ք̄ի թշնամիքն են, և զդաւանումն 'ի նոցանէ կու զղջացնեն, և քեզ ծառայ և երկրպագող կու լինեն.

Այսինքն, քո աթոռդ ով ա̄ծ յաւիտեանս յաւիտենից հաստատուն կու մնայ, երբ քո թագաւորութեանդ ամենևին վախճան չունի * և քո իշխանութիւն և թա

զա՟որութե զա՟ադանդ , շնոր
հութեան և արդար դատաստանի
զա՟ատեան է , ինք հեռի է յանիրա
ւութե , և յերեսպաշտութե :
Այսինքն , զի որ հայրն ած այն
պէս զարդարեաց զքեզ հոգւով
սրբով որ դու միշտ զշնորհու
թիւն և զարդարութիւն սիրեցեր *
և զստութիւն և մեղս և անօրէ
նութիւն ատեցեր :
Այսինքն , վասն որոյ օծ քս ած ,
օծեաց զքեզ քո հայրն ած իւղով
ուրախութե , եւ օծեաց զքեզ
լնութբ շնորհաց հոգւոյն սրբոյ
ըստ այնմ հոգի տն ՚ի վերայ իմ վն
որոյ և օծ զիս * բայց առա
ւել քան զաշխարհիս թագա
ւորքն և մարգարէքն և քահա
նայքն , որ այլոց միշտ բարի խոստա
տալով և ոչ հոգւոյ վիճակութիւն
հոգւալով քեզ ընկերք կամեին ,
զի որ ոչ հասարակ իւղով միայն
օծանեցան , իսկ դու ածութեան
իւղովն օծանեցար նորա մեկ կերպի
վերայ , կամ մեկ ժողովրդեան վն
միայն ունէին իշխանութի , իսկ
դու ընդհանուր աշխարհիս վն
որ և թագաւոր կարգեցար , և
մի անգամ պատարագեալ զքեզ
հօրն երկնաւորի , զամենայն
մարդկային ազգիս մեղքն քաւե
ցեր , և արդարոց դասուն ուրա
խութի պարգևեցեր , ուստի քո





Սիրեցեր զարդարու
թի * և ատեցեր զա
նօրէնութի :

Վասն այսորիկ եօծ
զքեզ ած , ած քո ,
իւղով ուրախութե
* առաւել քան զըն
կերս քո :

Ո մեռանել զաւաշխն
և զհետևայ՝ իշխեալ
բուռն մեծ * խառնմարաց
փոխեցեր * ...
... զեղ
զատերը Թագաւորաց
բաց՝ ի պատուն.



օծման իւղն, իւղ ուրախութեան
կամքի, որ գերազանց է քան զնոյ
օծումն.

Մ՝ասնիկն, քո հագած զգեստեղ
ամփոփանակ խնկի, և մեկի հոտ կու
բուրես, և բեղ մանկացող մարդ
կանց հոգեոր և մարմնաւոր չի
ճանգութիւննն նորա զօրութիւն
կու փարատես.

Պ՝ արձեալ՝ իբրյ մարմնոյդ որբոյ
ածութենդ զգեստն է, զանազան
առաքինութեց և բարեգործու
թեց անուշահոտութիւն կու բղխես
և պատարագելով զնա հօրն երկ
նաւորի, զկերն մարդկային ազ
գիս հետ կու հաշտեցնես. և
այդ նոյն ամփոփանակդ և խնկիդ
և մեկիդ անուշահոտութենն, իբր
զանազան բարեպաշտութեանց
առաքինագործութիւնն ձեռ ու
կաւէ շինած տաճարներէ կու բու
րեցնես, իբր զանազան գունա
ւոց քրիստոնեից եկեղեցեացն,
որ ձեռ ու կաւէ շինած տաճարներ
կամքին, իւրեանց մարդուբ և ամ
բիծ հաւատքի պատճառաւն. այն
տաճարներէն կամել, որ Թագա
ւորների աչքերն զքեզ ուրա
խացուցին, իւրեանց բարեգոր
ծութիւն քեզ ընծայ մատուցա
նելով, և քո արժանաւորութիւն
պատուելով և մեծարելով.

Պ՝ ատերը Թագաւորաց, իբր

հաւա

հաւատացեալ քրիստոնէից մա-
քուր հոգւոյն, որ քեզ տաճարելոց
դառնալը կամին, զերծ նոցա քա-
րոզութեանն հաւատացեալք ՚ի բեր-
եւ զելեղ որդիք այ են դաւանեալք.
Այսինքն, եւ քո սիրելի եւ ընտիր
Թագուհիդ, երբ քո կաթուղի-
կէ սուրբ եկեղեցիդ քեզ այլ կոչեց-
կուսականդ * սուրբ Թեւ շրջեր
հագած, երբ քո ամենայն խնա-
տութեամբ զարդարեալ, եւ զանա-
զան առաքինութեամբք սիրուն նազած
եւ գեղեցկացած.
Այսինքն, այժմ զիմ խօսքս դէպ
քեզ դարձուցանեմ ով սուրբ եկե-
ղեցի եւ ասեմ, թէ ով առաքե-
լոց եւ մարգարէից դուստր, լաւ
փառաւորեալ եւ դրից սրբոց
խրատն եւ քարոզութեան, եւ տես
եւ միայն այս, եւ քեզ սուրբ փեսայից-
ական զիր եւ ճշմարտանալիք * մո-
ռացիր քո ժողովուրդ, երբ քեզ
նախնեաց զանազան մօրութեան
եւ չար սովորութեան, այն քեզ
հօրդ տունն, երբ զոյն տունն,
որ զքո երկնային փեսայդ նախան-
ձու համար առեցին չարչարեցին
եւ սպանեցին * զերծ Թագաւորն
քո ցանկացաւ քեզ գեղեցկու-
թեան, երբ քեզ մաքրութեան եւ
անարատութեան.
Այսինքն, գիտացիր որ սա է
քո բանակած օրդ եւ քո տէրդ, եւ սորա





Կացցէ դշխոյն ընդ աջ-
մէ քումմէ * ՚ի հան-
դերձս ոսկեհուռս
զարդարեալ եւ
պաճուճեալ.

Լուր դուստր եւ տես
խոնարհեցո՛ զունկն
քո * մոռա՛ զժողով-
ուրդ քո, եւ զտուն
հօր քո * զի ցանկա-
ցաւ Թագաւոր գե-
ղոյ քոյ.

Զի ինքն է տր̅ քո
երկրպագեսցես նմա * եւ

դուստր ծառայ եր
կիր պագցէ նմա ※ և
պատարագօք զերես
նորա պաշտեսցեն մե
ծամեծք 'ի ժողովր
դոց.

Ամենայն փառք դու
ստեր թագաւորի 'ի
ներքոյ ※ 'ի վերջա
ւորս ոսկէ հուռաւ զար
դարեալ և պաճու
ճեալ.

Տարցին թագաւորի
կուսանք զհետ նորա
※ և զընկերսն նորա
տարցեն նմա.



հոգւով և ճշմարտութեամբ երկր
պագութիւն առնէ ※ զերէ ծառայի
դուստրն այլ ազգա երկիր կու պա
գանէ . իբր կռապաշտից եկեղե
ցին այլ ազգա կու ծնանդեցի եւ եր
կիր կու պագանէ ※ և մե՛ծ հաւա
տացեալ ժողովրդոց մեծամեծքն
և գլխաւո՛րքն 'ի հեռաւո՛ր երկր
ների կու գան ընծաներով և
պատարագներով, և զորս երեան
կու պաշտեն և կու մեծարեն, իբր
զորս արժանաւո՛ր փոխանորդքն
կու պատուե՛են և կու մեծարեն,
զերէ նչ միջնորդութեն 'ի քնէ
թողութի մեղաց և շնորք կու ըն
դունին.

Այսինքն, թագաւո՛րի դստեր
ամէն փառքն և մեծութիւն ներ
սեհանց է, իբր եկեղեցւո՛յն քնի
ամէն սրբութիւնն և գեղեց
կութիւն իւր հոգւո՛յն և իւր
խղճմտանքի միջն է ※ և իւր փա
ռակներքն ոսկեթելով է գործած
և իւրքն զարդարած և օրհնած է,
իբր իւր բարքն և կենդաղավարու
թիւն, ամծային իմաստութք և
զանազան առաքինութք զարդա
րած և սրբունացած է.

Այսինքն, և այս դստերս յետ
նէն այլուրիշ կուսանք այլ կու
սանելին, և թագաւո՛րին ընծայ
կու մատուցանելին. իբր թէ շատ
նորք հաւատացեալ ժողովուրդք այս

եկեղեցւոյս հետեւելով զկնի եանց քո Թագաւորին կուսա տուացանեն ※ և նորա ընկերներն այլ կուսանքն Թագաւորին մատ ևեր այլ ևինչ ազգ և ժողովուրդ որ քո եկեղեցւոյն հաւատով և գործովն նմանեն զնոսա այլ եւր եանց հետ կուսանքն տարա քո տաճարն , որ 'ի միասին վայելեն զփառս արքայութեանն երկնից ։

Ա՛ափնքն , կուզման ցնծութե և ուրախութե , և կուսանքն Թագաւորի տաճարն ։ ևրբ այս նոր հաւատացեալ ժողովրդներս ՚ոք տապերայ քաղաքութեան կու զման քո եկեղեցին , և կուտան զին 'ի ձեռն հրեշտակաց ուրա խութե և ցնծութե 'ի յերկնից արքայութին ※ և փոխանակ քո պապերից քո որդիքն կուլինին , ևրբ փոխանակ նահապետաց և մարգարէից որք պապերն են քաա մարմնոյ և քո զաւակաց դասա կեցին , քո առաքեալքն և քո վար դապետքն կուլինին , որ քո աւե տարանական ճշմարտութեն քա րոզեն , և քեզ նոր ժողովուրդ հաստատեն ։

Ա՛ափնքն , և դու զքո տապ եալքն բոլոր աշխարհիս վերայ Թագաւոր և իշխան կուկացու ցանես ※ և քո ՚ոք անունդ նշ խրատամե և քաղաքութեան յազգե



Ածցին ցնծութե և ուրախութեամբ , և տարցին 'ի տաճար Թագաւորի ※ և փոխանակ հարցքոց եղեցին որդիքքո ։

Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամ երկիր ※ և յիշեսցի անուն քո ընդ ամ ազգս ազգաց ։

Մ՚ն այսորիկ մարդ վաւրդք խոստովանեն եղիցին առ քեզ յա նխառնս և յաւիտ ենս յաւիտենից։
Տաղ. 18.

'ի հասարակ որդւոյն եր խայ իմ՚ոյ գոչմանց առա ջողութեան:

Սաղմ. խե:

Ձ Տէր մեր աստուածն և զօրութիւն * օգնա կան լեր ներողութեանց որք զանուն քեզ յայտ։

Ս ասն այսորիկ ոչ եղիցուք մեք 'ի խառ մեր եղիցի * 'ի խոխա

ազգ կու մեծի , և չի մնաց մեր 'ի մէջ հաւատացեալ քրիս տոնէից։
Այսինքն , ուստի զանազան ազ գեր և ժողովրդներ քեզ կու ձեռ զանդրին , և քո ոչ հաւատացող կու խոստովանեին յանխառնս յաւի տենից 'ի խաւս ոչ երրորդութեն։

Իբր , զայս սաղմոս շարադրեաց դաւիթ , և եա որդւոյն կորիաց որ եղջերն մի զաղանի խորհրդոց մարդեղութեն բանին ոչ , և մի որքդ եկեղեցւոյ նորա։
Այս սաղմոսաւն կու խօսի մար գարէն վասն եկեղեցւոյն , թէ ինչպէս ամէն վասնզի միջում ուղեղ սրտով աստուածեղ սխոխ յամ։

Այսինքն , որ ամ դու մեր աստուածն ես , և մեր կարողու թիւն և համբերութիւն ես ամէն մեր քաշած հալածանքներին մի ջումն * և դու մեզ օգնական և պահապան եղար այն նեղութեանց և այն փորձանքներին միջումն որ մեր դրուխն եկաւ 'ի պատժառս երեւելի և աներեւոյթ թշնամեաց մերոց։
Այսինքն , ուստի մեք ամենեքին չենք վախեր թէ բոլանդակ եր կիրս այլ շարժի և խռովի * և

թէ

թէ լեռներն այլ զերբեանց տեղն փոխեն , և ծովի մէջն ան կանեին · իսկ թէ բովանդակ երկրիս մարդիկն մէջ հակառակ այլ կանգնին , և ամէն իշխանք և մեծամեծք խուռեանց չար խորհրդոց և յիմարախօսութեց ծովի մէջն այլ մնաւն , և զմեզ հալածել կամենան , մեք բնաւ չենք վախենար ·

Այսինքն , ինչպէս նոր քրիստոնէութեն ժամանակին երբոր փորձանաց և հալածանաց ծովերի ջրերն գոչեցին և ալէկոծեցան * և մեծամեծ լեռներն · իսկ թագաւորք և իշխանք , քրիստոնէական հաւատքի զօրութեն ատելով խռովեցան և սրտմտեցան և հակառակեցան ընդդէմ քրիստոնէից , և քրիստոնեայք բնաւ չէ վախեցան ՚ի նոցանէ , այլ հաստատ մնացին ·

Այսինքն , զէրէ հոգւոյն սրբոյ շնորհաց գետերի գնացքն կուրախացնեն և կամաւորութեամբն այ քաղաքն , որ է սբ եկեղեցին * և իւրն բարձրեալն ած իւր անձերն և իւր բնակութեանն , որ է իւր հաստատեալ ժողովուրդն , այն գետերի ջրերովն սրբեց մաքրեց և հաստատուն պահեց ՚ի հաւատս ·

Այսինքն , ած մէջն նր մնջաւն է , և

ի փոխել լերանց ՚ի սիրտս ծովու ·

Գոչեցին և խռովեցան ջուրք նոցա * խռովեցան լերինք ՚ի զօրութե նորա ·

Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն այ * և սբ արար զխորանս իւր բարձրեալն ·

Ած ի մէջ նորա , և

նորա մի սասանեսցին ※ օգնեսցէ նմա Աստուած ՚ի վաղորդենէ մինչև ՚ի վաղորդայն ։

Խռովեցան հեթանոսք ※ և խոնարհեցան թագաւորութիւնք ※ ետ զձայն իւր բարձրեալն, և խռովեցաւ երկիր ։

Տէր զօրութեանց ընդ մեզ ※ ընդունելի է մեր Աստուած Յակոբայ ։

Եկայք և տեսէք զգործս Աստուծոյ ※ որ արար զնշանս և զարմանս ՚ի վերայ երկրի ։

է, և զիւրեանք կուզօրացնէ, որ ամենեքին իւրեանց թշնամեացն չէ՛ վախենեն և չէ՛ սասանին ※ զէրէ Աստուած նորա օգնականն կուլի նի մէկ առաւօտէն մինչև ՚ի միւս առաւօտն ։ իրր զիւրեանք միշտ հոգևոր ուրախութեան մէջն կու պահէ, և չէ՛ թողուր, որ յուսահատութեան գիշերին զիւրեանք տրտմեցնէ ։

Այսինքն, կռապաշտներն և անհաւատներն խռովեցան և բարկացան ընդդէմ հաւատացելոցն Քրիստոսի ※ և թագաւորք և իշխանք խոնարհեցան և հնազանդեցան ուղղափառ եկեղեցւոյն ※ զէրէ որ Աստուած ձայն տուաւ առաքելոց և վարդապետաց քարոզելու, և բովանդակ երկրիս վերայ եղած մարդիկն խռովեցան սասանեցան և զարհուրեցան ։

Այսինքն, զէրէ ամենազօր Տէրն մեր Յիսուս Քրիստոս մեզ հետ է ※ և Յակոբ նահապետի Աստուածն զհրեից ազգն ընտրեաց ձգեց, և զմեզ հաւատացեալ քրիստոնեայքս ընդունեց, և իւրն շնորհաց որդիք արաւ ։

Այսինքն, եկէք ով հաւատացեալք Քրիստոսի Աստուծոյ վերայ գործքն տեսէք ※ որ այսչափ նշանք և զարմանքներ էրէ և հրաշք արաւ երկրիս վերայ իւր փրկագործ տնօրէնութեամբն ։

Այս

Մարմինն, յաղթահարեաց վերացոյց եւ վերջ ձգեաց զամէն հակառակութիւն եւ զպատերազմ աշխարհիս մէկ ծայրէն մինչեւ ՚ի միւս ծայրն * եւ սատանայի եւ նորա կամարարաց նենգութեան եւ խաբէութեան աղեղն, իւր հաւատոյ ճշմարտութեամբ փշրեաց, անօրինաց ահն եւ երկիւղի զէնքն, իւր յուսոյ հաստատութեամբ կոտրատեաց, կամապաշտութեան եւ անհաւատութեան զաղխամանսն եւ զօրքն իւր սիրոյ կրակովն այրեաց, եւ խաղաղութի պարգեւեաց բարեաց եւ ամենայն մարդկանց.

Ես հար զպատերազմ ՚ի ծագաց մինչեւ ՚ի ծագս երկրի * զաղեղունս փշրեաց զզէնս խորտակեաց, եւ զվահանս այրեաց հրով.

Մարմինն, եւ սա, ո՛վ մարդիկ դարձէք կանուխ դէպ ինձ, ճանչցէք որ ես միայն ճշմարիտ ած եմ * իմ անուանս հեթանոսաց եւ անհաւատից մէջումն բարձրանալ պիտի, եւ իմ զօրութիւնս եւ կարողութիւնս մեծութիւնս երկրիս վերայ յայտնի լինել պիտի ՚ի ձեռն քարոզութեան առաքելոց եւ վարդապետաց.

Սթափեցէք եւ ծաներուք զի ես եմ ած * բարձր եղէց ՚ի հեթանոսս, եւ բարձրացայց ՚ի վր երկրի.

Մարմինն, ուստի մեզ հանապազ ասել պիտիմք, թէ մեր կարող եւ հզօր տէրն մեզ հետ է * եւ այն ած որ մէկ ժամանակ մի յակոբայ ազգն կու խնամէր, այժմ զմեզ քրիստոնեայքս կու սիրէ, կու ընդունի, եւ կու պահպանէ.

Տր զօրութեանց ընդ մեզ * ընդունող է մեր ած յակոբայ.

Ի կատարած վասն որդւոցն Կորխայ, սաղմոս դաւթի:

Սաղմոս ԽԶ:

Ծափս հարէք ամ հեթանոսք * աղաղակեցէք առ Ած ՚ի ձայն ցնծութեան:

Զի տր բարձրեալ և ահաւոր * թագաւոր մեծ ՚ի վերայ ամ երկրի:

Հնազանդ արար զժողովուրդս մեզ * և զհեթանոսս ՚ի ներքոյ ոտից մերոց:



Իբր, զայս սաղմոս շարադրեաց զաւիթ մինչև ՚ի վերջին կոչեաց որդւոցն Կորխայ, որ նէ երգեն: Այս սաղմոսաւն կու հրաւիրէ ժողովուրդն զամենեսեան գովել զԷն վասն իւր մեծութեն, և մանաւանդ վասն փառաւոր համբարձման նորա ՚ի յերկինս:

Այսինքն, ամ ազգք և ժողովուրդք ուրախացէք խնդացէք և ծափս զարկեցէք * աղաղակեցէք առ Ած հոգևոր օրհնութեն և գովութեն և ցնծութեն ձայնով միշտ և հանապազ:

Այսինքն, զի էր նա որ միայն Տր էր, միայն բարձրեալ էր, և միայն ահաւոր և սարսափելի Տր էր * իւր չարչարանօքն, իւր խաչիւն և իւր մահուամբն մեծ թագաւոր հաստատեցաւ ՚ի հօրէն իւրմէ ամ բոլոր աշխարհիս և բովանդակ երկրիս թագաւորացն վերայ:

Այսինքն, և զհեթանոսն ազգերն և ժողովրդներն մեր ոտքը հաւատքին հնազանդեցոյց * և կռապաշտներն և անհաւատներն մեր ոտաց տակին ձգեց, իբր թէ մեր քրիստոնէական կենդանագրակա-

թին հրաւիրեցայց , և խորհուրդ
եկեղեցւոյն ծառայ լինել.

Այսինքն , ընտրեաց զմեզ , և իւրն մասնք և ժառանգութիւն արար * ընտրեաց զմեզ , որ յակոբայ , և խոստացելոցն ազգին գեղեցկութիւն և փառքն և պարծանքն ենք վասն քրիստոնէականն հաւատոյն մերոյ , այն յակոբայ կոչեմ , որ յառաջ ասացեալ կու սիրելք և կոչնականեալքն իւր հարազատ որդւոյն նորին.

Ընտրեաց զմեզ իւր ՚ի ժառանգութի * զգեղեցկութիւն յակոբայ զոր սիրեաց.

Այսինքն , և յետ կատարելոյ զիւր ամ տնօրէնութիւն , համբարձաւ քս ած ՚ի յերկինս , որ հնութբ և գովութբ երկնային զօրացն * և բազմիցն տր էր հրեշտակաց և մարդկան , վասն որոյ զանազան փողոց և սաղերի ձայնովն գնաց առ հայրն իւր երկնաւոր , և նստաւ ընդ աջմէ նր.

Համբարձաւ ած օրհնութբ * և տր մեր ձայնիւ փողոյ.

Այսինքն , ուստի ամ հաւատացեալ քրիստոնեայք օրհնեցէք և սաղմոս ասացէք քրիստոսի այն մերոյ * օրհնեցէք և սաղմոս ասացէք մեր թագաւորին , օրհնեցէք գովեցէք և սաղմոս ասացէք հանապազ քանզի կենդանին է.

Սաղմոս ասացէք այ մերում * սաղմոս ասացէք թագաւորին մերում սաղմոս ասացէք.

Այսինքն , թագաւոր մեծ հաստատեցաւ քս ած յիւր հօրէն բոլոր աշխարհիս մերոյ * վասն որոյ օրհնեցէք և սաղմոս ասացէք իւրն խելօք և իմաստութեամբք ,

Թագաւոր մեծ իսկ ամ երկրի ած է * սաղմոս ասացէք նմա իմաստութբ.

Թագաւորեաց Ած ի վերայ հեթանոսաց * Ած նստաւ յաթոռ սրբութեան իւրոյ։

Իշխանք ժողովրդոց ժողովեցան առ Ածն Աբրահամու * զի Այ զօրութիւնք երկրի յոյժ համբարձան։

Տուն: գ.



իւր չէ թէ միայն բերանով, այլ և մատուցութեամբ և խնամողութեամբ։ Այսինքն, զերծ չէ թէ միայն հրեից վերայ, այլ և կռապաշտից վերայ ազգաց և թագաւորաց, և իւրն նոր ժողովուրդ ըստացեալ * և յետ իւր չարչարանաց և մահուամբն համբարձաւ լերկինս, և նստաւ իւր սրբութեան աթոռն, իբր իւր ածութեան աթոռն, որ ունէր յառաջ քան զլինելն աշխարհի։

Այսինքն, իսկ յետ համբարձմանն քո զանազան ազգերի և ժողովրդների թագաւորներն և իշխաններն ժողովեցան առ Ածն Աբրահամու, իբր հաւատացին ի Քրիստոս Ած * զերե Այ զօրութիւնքն, իբր առաքեալքն յերկրէ յոյժ համբարձան, իբր առաւելագոյն զայլ մարդիկ երկրաւորը և մարմնականն հողոյ զիւր եանք հեռացուցին, և միտք մերացան ի յերկինս, և Ածային գիտութեան զարդարեալ, իւր եանց ըսքանչելեացն և քարոզութեան բոլոր աշխարհս լուսաւորեցին, և դարձուցին ի Քրիստոսա ածպաշտութիւն, ուստի Այ զօրութիւնք կասեն, զերե Այ պաշտօնեայք և գործակիցք եղան, և Ած նոցա ձեռամբն իւր զօրութիւն և ըսքանչելիսն նոցանից եառաջ

ած

ամենայն երեւելի եւ աներեւոյթ թշնամեաց իւրոց.

Իբր, զայս օրհնութիւն սաղմոսս շարադրեաց Դաւիթ եւ ետ որդւոցն Կորխայ որ սոքա գովեսցեն եւ փառաբանեսցեն զնա.
Այս սաղմոսաւս կու գովէ մեզ զարդն զընդհանուր կաթողիկէ եւ առաքելական եկեղեցին աստուծոյ.

Այսինքն, մեր տրն մեծ է եւ անչափ է, զէրէ ամ տեղ պատրաստ է, եւ բոլոր աշխարհս իւր մէջումն է * մեր տրն սաստիկ օրհնած եւ գովուած է իւր ամենայն բարութեան համար, իւր խնամատութեան համար, եւ իւր քաղցրութեան համար * եւ ասուել մեր այ քաղաքի մէջումն, որ է երուսաղէմ, եւ իւր սբ լերանումն, որ է լերանն սիոն, որ կու նշանակէ զմայր սբ եկեղեցին.
Այսինքն, ամենայն երկիր հաստատ եւ անմուր արմատով, իբր հաստատուն հաւատով եւ Ճշմարիտ սիրով թող ցնծայ եւ ուրախանայ * զէրէ սիոնի լերանները, որք ենէր կռատուն ազգն խաչերի, եւ հիւսիսոյն կողմանքն, որք են կապաշտից իշխանութիւնն, մեծ թագաւորին մեր քաղաք դարձան,





Սաղմոս օրհնութեան որդւոցն Կորխայ երկրորդ շաբաթու:

Սաղմ. ԽԷ.

Մեծ է տր * եւ օրհնեալ է յոյժ * ի քաղաք այ մերոյ, ի լերան սբ նորա.

Հաստատեալ ցնծացէ ցնծութբ ամ երկիր * լերինք սիոնի, կողմանք հիւսիսոյ քաղաք թագաւորին մեծի.

Ա՟Ծ 'ի տաճարի իւր ամ յայտնի * 'ի մէջ մանկանց իւրոց օգնական լինէր նոցա։

իւր հաւատացեալ ժողովուրդ եղան, և մի եկեղեցի կազմեցին և յօրինեցին։

Այսինքն, ա՟Ծ իւր տաճարի մէջն կու յայտնի, իւր ք՟ի ող՟ մարդասիրութիւն, խնամքն և սուրբ միութիւն իւր սուրբ եկեղեցւոյ մէջն կու ճանաչուի * և մանաւանդ երբոր մտածեն այն ժամանակն, որ նա իւր չարչարանքն և մահուանէն նոցա օգնական կու լինէր, փրկելով զիւրեանք 'ի գերութենէն սատանայի և հաշտեցնելով ընդ Հօրն երկնաւորի։

Ահաւասիկ թագաւորութիւնք երկրի ժողովեցան * և անցին 'ի միասին։

Այսինքն, ահա աշխարհիս երկրի և ամենայն թագաւորութիւնք մէկ տեղ ժողովեցան և խորհուրդ արարին թէ ինչպէս հալածականեն և բառնան զեկեղեցին ք՟ի * բայց Հոգւոյն սրբոյ զօրութիւնն իւրեանք կու յաղթէին և կու անկանէին 'ի խորս անդնդոց։

Ինքեանք տեսին այսպէս * և զարմացան, խռովեցան, սասանեցան, և դողումն կալաւ զնոսա։

Այսինքն, իւրեանք երբոր տեսան որ սուրբ եկեղեցին ք՟ի այսպէս ճշմարիտ էր հաւատով հաստատուն էր յուսով, և բոլորը եւս էր սիրով * զարմացան խռովեցան և վախեցան, և դողն բռնեց զիւրեանք։

Անդ երկունք որպէս 'ի ծննդական * 'ի հողմն սաստիկ փշրես

Այսինքն, այնպէսն եղաւ այն թէ ինչպէս ածն և երկունքն կու բռնէ զիւրեանք, և տարաբեր

կենդան նման ցանէն զխրճանք
կատաղորդէ * զերէ Թարսիս քա
ղաքի նաւորին նման , հողմոյն
որոց չորրհաց քամին հոգս քա
րացած սիրտն կափրէ և կա
կակղացնէ զնոյ 'ի ճշմարիտ ած
պաշտութիւն.

Մարդիկն , և կատղեալն և կա
ծառայութիւն ոչ եկեղեցեայն սան
րով մեծարանց հեռ , թէ աշխ՛ նեղ
պէս որ լսեցէք թէ դրունք
դժոխոց զնա չէն կարէր յաղթա
հարել , այնպէս տեսանք այսերկ
նայոն զօրութեց սերոշ քաղա
քումն , այս մեր ճշմարիտ ո՞յ քա
ղաքումն , որ է ընտանեկանն հոգ
ւոյն սրբոյ , բաս այնմ խոկ մեծ
Թարսիս հոգին ոչ զօր տապէս
ցէ հայր յանուն իմ նա ռատես
ցէ ձեռ զած ճշմարտութեան զի
ընդ ձեռ ընտանեցի 'ի յաւիտենէն.
Մարդիկն , ճշմարիտ որ ա՛ծ սորա
հիմն այնպէս է գրեր , որ յա՛ւ
տեանս յաւիտենից հաստատեալ մնայ
* մեր ո՛չ ա՛ծ զքո ողորմութեց
այս հաւատացեալ ժողովրդեան մի
ջումն տեսանք և ընդունեցիցէք ,
զայն ողորմութիւն որ զաւ քամիս
ծին որդ՛ւոց մեզ արարեր , մեր
կերով զմեզ 'ի գերութենէ սատա
նայի , և 'ի տանջանացն դժոխոց.
Մարդիկն , ո՛չ ա՛ծ ինչպէս որ
քո ոչ անուանք մեծ է և զօրն

նայի ,



ցէ զնաւս 'ի Թար
սիս.

Որպէս լուաք այն
պէս և տեսաք 'ի քաղա
քի տեառն զօրութեց
'ի քաղաքի ո՛յ մերոյ.

Ա՛ծ հաստատեաց զնա
յաւիտեան * ըն
կալաք ա՛ծ զողորմու
թիւ քո 'ի մէջ ժողովրդ
եան քոյ.

Ըստ անուան քում
ա՛ծ այնպէս և օրհ

նութիւն քո ընդ ամենայն տիեզերս * և արդարութեամբ լի է աջ քո.

Ուրախ եղիցի լեառն սիոն * և ցնծասցեն դստերք յուդայ վասն իրաւանց քոց Տէր.

Շրջեցարուք զսիոնիւ, և պաշարեցէք զնա * և պատմեցէք յաշտարակս նորա.

Դիք զմիտս ձեր ի

նայի, այսպէս և քո օրհնութիւնդ և քո շնորհքդ անչափ է, և ամենուր է բոլոր աշխարհքիս վերայ * և քո աջ ձեռքդ արդարութեամբ լի է, զէրէ ամենեցուն խրատից գործոցն գորայ ուղիղ դատաստանովդ հատուցումն կանես.

Այսինքն, ուրախ լեառն սիոն, երբ քո տր̃ եկեղեցին մէջս կուրախանայ * և դստերքն յուդայի որդւոյն յակոբայ նահապետին, երբ հաւատացեալ քրիստոնէից հոգիքն կուցնծան քոյ իրաւունքիդ վերայ, որ զինուորներ յաւիտենական փառք կու պատկես և կու զարդարես.

Այսինքն, ուրեմն ով հաւատացեալ քրիստոնեայք շուրջ եկէք տր̃ սիոնի բոլորն, պաշարեցէք և պատմեցէք զինքն հաստատուն հաւատով գրկեցէք զնա ճշմարիտ սիրով, և ամենեքին նորանէ մի հեռանայք * և թէ վարդապետք էք և քարոզ կու զէք առ, ձեր զլխէն դուրս առասպել խօսքեր մի խօսիք, այլ տծ̃ային գրոց վերայ խօսեցէք, և քարոզեցէք, զէրէ տծ̃ային գրեանք տր̃ եկեղեցւոյ պարիսպներն են, վասն որոյ դուք ձեր բանին նշ̃ վր̃ հաստատեցէք, և նոցա բանին պատմեցէք հաւատացեալ ժողովրդեանին.

Այսինքն, բայց յառաջ քան

Թէ քարոզ տայք ձեր սիրոյն և ձեր միոյն գրէք նորա զօրութեցն վերայ, իբր սուրբ եկեղեցւոյ խորհրդներին վերայ, և լուսա ցէք և վերայ հատէք * բաժանե ցէք և ջնջնջեցէք նորա անհրոց ներին, իբր ոչ հաւատոյ գլխա ւոր մասունքն, որ կարենայք ձեր ազգի միջումն, և կամ այլ ազգերոց միջումն համարձակ խօ սել և պատմել և հակաճառել

խնդրոց հաւատոյն ձի·

Այսինքն, զերէ սա որ այս եկե ղեցւոյս միջումն կուապաշտանն և կուերկրպագուն երկինք և երկիրք ածն է, այլև մեր քրիստոնէից ածն է յաւիտեանս յաւիտենից * և սա զմեզ կու պահէ և կու կերակրէ հոգւով և մարմնով

մինչև յաւիտեան·

Իբր, զայս սաղմոս մինչև ՚ի վերջն գաւթէ է շարադրեալ վա որդւոցն կորխայ որ ՆՁ եդդեն

առաջի ոյ·

Այս սաղմոսումս մարգարէն ըղ ձմարիտ Նմանապարհն փրկութե հոգւոց, և զմանգն դասապար

տութե կուպանք·

Այսինքն, լսեցէք զայս իմ օր ինակար խօսելոս ամենայն ազգ և ազինք * և ականջ դրէք իմ խօս

սիս



վերայ զօրութեց նոր * բաժանեցէք զա մուրս նր, զի պատ մել կարասջիք յազգ

ազգ·

Սա է ած ած մեր յա ւիտեանս յաւիտե նից * և սա հովուես ցէ զմեզ մինչև յաւի

տեան·

Տունք. 13:

՚Ի կատարած որդւոցն կոր խայ սաղմոս գաւթի:

Սաղմ. խԸ·

Լուարուք զայս ամ ազգք * ունկնդիր լե րուք ամենեքեան որք

բնակեալ էք յաշ
խարհի·
Ծնունդք երկրի եւ
որդիք մարդկան* ի
միասին մեծամեծք եւ
տնանկք։

Բերան իմ խօսեսցի
զիմաստութիւն* եւ
խորհուրդ սրտի իմոյ
զհանճար։

Խոնարհեցուցից յա
ռակս զունկն իմ
* բացից զսաղմոս որ
ծնունդք խորհրդեան։

Ընդէր բնաւ երկն
չիմ ես յաւուր չա
րի* զի անօրէնու
թիւք գնացից իմոց
շուրջ եղեն
զինեւ։



ովս դուք ամենեքեան որ այս աշ
խարհիս վերայ կը բնակիք։
Ո՛վ մարդիկ, դուք այս երկրիս
ծնունդն էք, թէ դուք որ հա
սարակ մարդկանց որդիք էք, այլ
եւ դուք որ երեւելի եւ անուանի
մարդկանց զաւակք էք* ամենքդ
միասնեղ, թէ հարուստ եւ թէ
աղքատ, իմ բանիս սրտի մտօք
ականջ արարէք։
Ո՛վ մարդիկ, զէրէ իմ բերանս ճշ
մարիտ իմաստութիւն կու խօսի, եւ
ձեր հոգւոյ փրկութեան համար
պարզն ձեզ կու ծանուցանէ*
եւ իմ սրտիս խորհուրդն ձեզ երկ
նային խելք կու տայ, որ կարե
նայք զձեր օգուտն տեսնել եւ
իմանալ։
Ո՛վ մարդիկ, չէ՛ թէ ես իմ գլխէս
դուրս ձեզ բան կասեմ, այլ կու
խոնարհեցուցանեմ զիմ ականջս
հոգւոյն սրբոյ տուն տուած
աւանդներին* եւ կու բացատրեմ
ձեզ խելքերնէ զանազան առակ
ներ իմացուցանել. օրհնելով եւ
գովելով զԱծ.
Ո՛վ մարդիկ, ես կու վախեմ եւ կու
տարակուսիմ ես այն չար օրէն, երբ
իմ մահուան օրէն, կամ դատաս
տանի օրէն* զերէ կու տեսանեմ
որ իմ քայլերս եւ գնացքիս անօ
րէնութիւնս զիս կու պատէ, երբ
իմ գործոց եւ իմ արարմանց ան

կար

կարողութիւն և ծառութիւն զնս կուպաշտէ.

Մասնիկն, բայց այն մարդիկն որ մնացեր են զան, և յիւր եանց ապրանքն և կարողութիւն են յուսացեր * Նոքա իւրեանց շատ փառաց և մեծութեան վերայ պարծենալով անզեղջ կու մեռանին, և կու զրկվին յերկնից արքայութենէն.

Մասնիկն, և չէ՞ն մարդ ասեր, թէ անզեղջ մարդն ինչ բարեկութենէն և արդար դատաստանէն ոչ եղբայր կու փրկէ, իբր ոչ Ք̃ս կու փրկէ, որ է եղբայր մեր ըստ մարմնոց, և ոչ Հասարակ մարդ * զերբէ մարդս ինչ է որ իւր ըն կերոջն ազատութեն համար կարէնայ փոխարէնն իրմէն տայ ինչ, թէ որ իւր անձին ազատութեն գինն այլ չէ կարեր վճարել.

Մասնիկն, բայց թէ դու կու զես, քոյ անձին փրկութիւն, աշխատիր մինչև քոյ մահուան օրն, և ջանքը արա, որ ինչ կարէն կատարես * զերբէ այդպէս կու անմահանաս, և կենդանի կու մնաս յաւիտեան յաւիտենից, և դժոխոց ապականութեն չես տեսաներ.

Մասնիկն, երբոր կու տեսանես թէ իմաստուն մարդիկք, իբր Ա̃ծ-ային օրինացն և պատուիրանացն





Յուսացեալք ՚ի զօրութիւն իւրեանց * ՚ի բազմութիւն մեծութեան իւրեանց պարծեսցին.

Եղբայր ոչ փրկէ, և ոչ փրկէ մարդ * և ոչ տայ ինչ զփրկանս իւր, և ոչ զգինս փրկանաց անձին իւրոյ.

Աշխատեսցի յաւիտեան * և կեցցէ մինչ իսպառ, և ոչ տեսցէ զապականութիւն

Յորժամ տեսցես թէ իմաստունք մեռանիցին * ՚ի միասին

անզգամք եւ անմիտք կորիցեն, եւ թողցեն օտարաց զմեծութիւն իւրեանց.

Գերեզմանք նոցա տունք նոցա եղիցին յաւիտեան, եւ յարկք նոցա յազգէ մինչեւ յազգ * եւ կարդասցեն զանուանս նոցա ՚ի հողս իւրեանց.

Մարդ ՚ի պատուի էր եւ ոչ իմացաւ * հաւասարեցաւ անասնոց անբանից, եւ նմանեցաւ նոցա.

Այս ճանապարհ է նոցա գայթակղութիւն նոցին * յետ այսորիկ բերանովք իւրեանց

Ծնողանց մարդիկք կու մեռանին * դու մի՛ զարմանար եւ տարակուսիր, զի թէ անզգամ եւ օրինազանց մարդիկն այլ կու մեռանին, բայց իմաստուններն թէպէտ կու մեռանին մարմնով, այլ կենդանի կու մնան հոգւով, իւրեանց յոյսն անմահութիւն է, իսկ անզգամներն եւ յիմարներն հոգւով եւ մարմնով կու կորնչին. եւ իւրեանց ինչքն եւ ստացուածքն փառքն եւ մեծութիւն այլոց կու թողուն.

Այսինքն, իւրեանց գերեզմաններն իւրեանց տուն կու լինի, մինչեւ դատաստանի օրն, եւ իւրեանց բնակարան կու լինի յազգէ մինչեւ յազգ * եւ իւրենց անուններն իւրեանց հողումն միայն կու մնայ. իբր կամ՝ իւր բնակարանումն, եւ կամ՝ իւր գերեզմանումն,

Այսինքն, մարդս ՚ի պատուի էր ոչ երբ ստեղծանէր, երկնից այս բարութեան ժառանգորդ էր այս աշխարհիս * բայց ինքն իւր մարմնոյ ցանկութեան հետեւելով, անբան անասնոց համասարեցաւ եւ անմիտ կենդանեաց նմանեցաւ.

Այսինքն, այս անպարկեշտ վար եւ անխորհրդական արարելոյ ճանապարհն է որ նց գայթակղելոյն եւ կորնչելոյն պատճառ դարձաւ *

ուստի

ուստի յետոյ յաւուրն դատաստանին թող իւրեանց բերանովն խոստովանեսցին իւրեանց ծառայն, և իւրեանց կամքն հաւանեսցեն և ասեն, թէ յիրաւի մենք արժանի ենք այսպիսի պատժի և պատուհասի:

Մարգարէն, զերդ զորս անիրաւն ոչխարներուն նման դժոխքի ատն քանայն կամատնելին, և յամէն անհնական մահն կամ տիրէ իւրեանց * և արդար և ուղիղ մարդիկն յարութեան առաւօտուն, երբոր Քրիստոս արեգակն ջու կու ծագի, կու դատեն և կու դատապարտեն զդոսա առաջի Այ և հրեշտակաց նորա:

Մարգարէն, ինչ օգնութիւն յոր որ ունին դոքա թէ իւրեանց այդ բանքէն և թէ իւրեանց բարեկամներէն, կու փչանայ դժոխքումն * և այն առաջի փառքն իւրեանց ձեռքէն չէ անկանիր:

Մարգարէն, բայց ես յուսացեր եմ Ած, որ երբոր իմ հոգիս դենոց ՚ի դժոխս հեռ այդոց նախահայրն մեր Քս որդին Այ և յորն անմէնեգուն իւր կամաւոր մահուանքն և հրաշալի յարութեամբն զիս փրկէ և ազատէ դժոխոց ձեռքէն:

Մարգարէն, դու մի՛ վախներ երբ որ կու տեսանես թէ մէկ մարդ մի կու հարստանայ և կու մեծանայ





հաճեսցին:

Որպէս ոչխարս ՚ի դժոխս մատնեսցին, և մահ հովուեսցէ զնոսա * և տիրեսցեն նոցա ուղիղք ընդ առաւօտս:

Օգնութիւն նոցա մաշեսցի ՚ի դժոխս * և ՚ի փառաց իւրեանց անկցին:

Բայց Ած փրկեսցէ զանձն իմ ՚ի ձեռաց դժոխոց յորժամ ընդունիցի զիս:

Մի՛ երկնչիր յորժամ մեծանայ մարդ * և յորժամ բազմանայ փ

նմին փառք տան նր։

Զ ի ոչ եթէ 'ի մեռանելն իւրում առցէ ընդ իւր զամ * և ոչ եթէ իջցեն փառք տան նր ընդ նմա։

Այլ անձն նորա 'ի կեանս իւրում օրհնեսցի * խոստովանեսցին քեզ յորժամ բարի արասցես դու նմա։

Մտցէ նա մինչև յազգ հարց իւրոց * մինչև յաւիտեան ոչ լոյս տեսցէ։

Մարդ 'ի պատուի էր և ոչ իմացաւ * հաւասարեցաւ անասնոց անբանից և նմանեցաւ նց։

Տունք. 20.



* և մի՛ սարսափիր և յուսահատիր երբ որ նորա տան պատիւն և փառքն կու շատանայ։

Այսինքն, զէրէ չէ՛ թէ մեռանելոյն ժամանակին զամէն ինչ որ ունի իւր հետն կու տանի * և չէ՛ թէ իւր տան փառքն և թանթանաքն իւր հետն կու իջանեն 'ի գերեզման։

Այսինքն, այն քանի որ կենդանի է՛ այս կեանքումս իւր անձն կու օրհնէ և կու գովէ երեսապաշտ և կեղծաւոր մարդկանցէ * և թէ դու այն իւրն մէկ բարերարութիւն մի անես, կու խոստովանի քո լաւութիւնդ, և քեզ սէր ցոյց կու տայ, բայց յետոյ շուտով կու մոռանայ։

Այսինքն, այդպիսի մարդն կու իջանէ դժոխոց յատակն, մինչև այն տեղն որ իւր ազգն և զարմն է * և յաւիտեանս յաւիտենից այն մխիթարութիւն լոյս չի տեսանէր։

Այսինքն, ահա այս էր որ ասացի, թէ մարդս իւր պատիւն և իւր արժանաւորութիւն չիմացաւ * այն իւր ախմախին և իւր մարմնոյ ցանկութիւն հետևելով անբան անասնոց հաւասարեցաւ և նմանեցաւ։

Ասափս այս էր մի ՚ի յերգեցողացն Դաւթի ՚ի մէջ այլ ղեւտականացն, որք երգէին զերգս առաջի ՟տն ըստ կարգադրութեան Դաւթի մարգարէին.

Այս սաղմոսումն կանխասէ մարգարէն վասն աւուր դատաստանին.

Այսինքն այն Հզօրին ածն որ ՚ի վեր է քան զամ սուտ եւ խաբեբայ ածնոցն, եւ որ է բոլոր աշխարհի տր խօսեցաւ եւ հրամայեց իբր ամենակարող զօրութեամբն * եւ կոչեաց զերկիր, իբր կանչեաց զբովանդակ մարդկային ազգս յարեւելից մինչեւ յարեւմուտս որ զանն ՚ի դատաստան.

Այսինքն, ՚ի վերին Սիոնէն ՚ի յերկնից արքայութեան եւ ՚ի յանձային բնակութեան կուսութեան ըստ բարեաց եւ արդարոց նորա փրկութեան եւ գեղեցկութեան մեծ վայելչութեան, փրկութեան վայելչութեան կուսութեան, զերծ կուսական զխոստմունս ՚ի յաւիտենական մահուանէ, եւ գեղեցկութեան վայելչութեան կուսութեան, զերէ կուսական զխոստմունս մշտնջենաւորական փառաց.

Այսինքն, եւ չէ թէ խոնարհ





Սաղմոս ասափայ:

Սաղմոս. խթ:

Աստուածոց տէր խօսեցաւ * կոչեաց զերկիր յարեւելից մինչեւ ցմուտս արեւու.

՚Ի Սիոնէ մեծ վայելչութիւն փրկութեան գեղոյ նորա.

Ած մեր յայտնապէս

եկեսցէ * և ած մեր մի՛ դադարեսցէ.

Հուր առաջի նորա բորբոքեսցի * և շուրջ զնովաւ մրրիկ յոյժ.

Կոչեսցէ զերկինս ՚ի վերուստ և զերկիր * ՚ի դատել զժողովուրդ իւր, ժողովել առ ինքն զնոսա իւր * և որք դնեն զուխտ պատարագաւ ուխտից իւր սեղանոյ.

Պատմեսցեն երկինք զարդարութիւն նր * զի ած դատաւոր է.



ութի և կամ ծառայի կերպարանեալ կուգայ ինչպէս առաջին անգամն, այլ յայտնի ածային փառօք զարդարեալ * և չի՛ դադարիր և ամենևին չի կենար ինչպէս առաջին անգամն, այլ կու խօսի բարձր ձայնիւ, և կու դատէ զկենդանիս և զմեռեալս.

Այսինքն, իւր առաջևն աշխարհին կրակ պիտի բորբոքի, և այրէ և մաքրէ զամենայն երկիրս * և իւր բոլորըն սաստիկ մրրիկ և մթնած քամի պիտի շարժի և փչէ, և սասանեցուցանէ, և խռովանէ աշխարհիս տարերքն.

Այսինքն, պիտի կանչէ իւր առաջևն զամենայն երկինային զօրութիւնն և հրեշտակաց դասերն, և զամէն հողերէն մարդիկ որ այս աշխարհս են եկած * և դատաստան անէ իւր ժողովրդեանն, և իւր սրբերն իւր մօտն ժողովէ * և մանաւանդ զայնոսիկ որ այս կենդանութեան իւրեանց կեանքն իւրեանց սրտի սեղանին մէջ ուխտած պատարագի նման ող կու մատուցանեն. իւր մէջ սրտի մօտը ող օրհնեացն և պատարագացն կու ձօնադրեն.

Այսինքն, և շուտով երկինք, իւր հրեշտակք երկնից պիտին փչել զփողն դատաստանին, և պատմեն մարդկանց, թէ հասեր

է ոչ արդար դատաստանի ժա մանակին * և ասեն թէ ինչն չի ած դատաւոր և դատաստանան անող է մարդկան ·

Մտիկըրէն , ու ասիք քանի որ ժամանակին ձեռքդ է , ոչ խօսայն ծնազանդիր որ կանէ , թէ ըսէ ինձ ով ժողովուրդ իմ , զերէ կուզեմ որ խօսիմ քեզ հետ * ականջ դիր ով իսրայէլ , երբ ով հաւատացեալ ժողովուրդ իմ , զերէ կուզեմ որ քո սրտիդ վկայութի տամ , որ ես երկնի և երկրի բանեցծօղ ածս , քո տերն եմ և քո ածն եմ:

Մտիկըրէն , ես քու պատարագներուդ · երբ քու մատաղներիդ համար զքեզ չեմ նախատեր և յանդիմաներ * զերէ քո ողջակէզներդ · երբ քո անպակաս այրած գառներդ որ ինձ մատաղ կանես համապազ իմ աչքիս առաջին են:

Մտիկըրէն , ես չեմ ուզեր և չեմ ընդունիր քու տանդ հորթուկներն * այլև չեմ ուզեր քու գեհիդ այծերն ·

Մտիկըրէն , զերէ որչափ որ մանկներումն կենդանին և գազան կայ ամէնն իմ է * և որչափ որ լեռներումն վայրի ոչխարք և անասուն կայ , ամէնն իմ է , և ես եմ բանեցծեր զըամենայնին ·

Մտիկըրէն , որչափ որ երկն



Լուր ժողովուրդ իմ , և խօսեցայց ընդ քեզ * և խօսեցայց քեզ վկայեցից . զի ած ած քո եմ ես եմ:

Ոչ թէ վասն պատարագաց քոց կշտամբեցից զքեզ * զի ողջակէզք քո առաջի իմ են յամ ժամ:

Ոչ ընդունիմ 'ի տանէ քումմէ զուարակս * և ոչ 'ի հօտից քոց նոխազս ·

Իմ է ամ գազան անտառի * երէ լերանց և ամ անասուն ·

ռչունս երկնից * գե
ղեցկութիւ վայրի
ընդիս է.

Թէ քաղցեայց ընդ-
քեզ ինչ ոչ ասացից
* զի իմ է աշխարհ
լրիւ իւրով:

Մ՛չ ուտեմ ես զմիս
զուարակաց քոց * և
ոչ զարիւն նոխազաց
քոց ըմպեմ:
Մատո՛ այ պատարագ-
օրհնութեն * և կա
տարեա՛ բարձրելոյն
զուխտս քո.

Կարդասցես առ իս
յաւուր նեղութե
քո, ես փրկեցից
զքեզ * և դու փա
ռաւոր արասցես
զիս.



քում զանազան թռչուններ կայ
զամենն ես գիտեմ և կուճանա
չեմ * և որչափ որ գեղեցիկ վայ
րի պտուղներ կայ ինձ հետ է, իմ իմ
հրամանաց տակն է.
Այսինքն, թէ որ ես մարդի
նման քաղցենամ, չեմ գար զքեզ
աղաչեր որ ինձ կերակուր տաս *
զէրէ աշխարհս իր բարեացն և
իր լրութենովն իմն է, և ես եմ
ստեղծեր զան:
Այսինքն, ես քու հօրթուկներուդ
միսն չեմ ուտեր * և ես քու այ
ծերուդ արիւնն չեմ խմեր, զէրէ
անկարօտ եմ ես այդ կերակուրներուդ.
Այսինքն, այլ թէ կուզես որ
քու Աստուծոյդ գոհութիւն տաս, իրն
օրհնութիւն և գոհութիւն պատա
րագ մատո՛ւ սրտով և յօժարութեամբ
* և ինչ ուխտ որ կանես քու Բար
ձրելոյ Աստուծոյդ, մի՛ անհո
գութենով մոռանար, այլ շու
տով կատարէ.
Այսինքն, որ թէ իմ կամացս
հնազանդիս, և զիմ օրէնքն և
պատուիրանքն սրտով կատարես,
երբոր քեզ փորձութիւն և նեղութիւն
որ մի հանդիպի, շուտով աղաղա
կելով 'ի բաց դէպ ինձ, կու փրկեմ
զքեզ քու ամէն նեղութենէդ *
և դու անուանելով զիմ բարերա
րութիւն զիմ անունն ամէն տեղ
կու օրհնես և կու փառաւորես:

Նախնիքն, իսկ մեղաւոր և անզեղջ մարդկանց կասէ Ած, թէ ով մեղաւոր, դու որով հեռացու անձնադանդութեանովդ և քո կամապաշտութեանովդ. ինձանից հեռացեր ես, և ինձ հետ մասն և բաժին չունիս, էր զիմ արդարութիւնս և զիմ ճշմարտութիւնս այդ քո անարժան բերանովդ այսպէս կու պատմես, և կու քարոզես * կամ թէ զիմ ուխտն և կտակարանքն, երբ զիմ օրէնքն և պատուիրանքն էր քո բերանդ կու առնուս, և կու խօսիս։

Նախնիքն, դու խոյ զիմ Ածային խրատս ատեցիր, երբ զիմ օրէնքն և պատուիրանքն չի սիրեցիր * դու զիմ բերանիս խօսքն դէն ձգեցիր. երբ վարդապետաց և գրոց սրբոց ականջ չըրուիր քոյ ցանկութեանդ հետևեցար։

Նախնիքն, դու երբոր կու տեսանէիր գողոյն փախանակ խրատելոյ զինքն, իւրին հետ գողութի կու գնայիր * և շնացող մարդկանց հետ մասնակից կու լինէիր, և բարեկամութի կանէիր։

Նախնիքն, քո բերանդ միշտ լի էր անիրաւութեամբ և չարութեամբ. երբ ստութեամբ և հայհոյութեամբ * և քո լեզուդ համապայ նենգութի և խորամանկութի կու ձևարէր այլոց համար։

Սակայն մեղաւորին ասէ Ած, ինչ դու ընդէր բնաւ պատմես զարդարութիւն իմ * կամ առնուս զուխտ իմ ՚ի բերան քո։

Զի դու ատեցեր զխրատ իմ * մերժեցեր և յետս ընկեցեր զիմ բանս բերանոյ իմոյ։

Թէ տեսանէիր գող, ընթանայիր ընդ նմա * և ընդ շունս դնէիր զբաժին քո։

Բերան քո յաճախէր զչարութի * և լեզու քո նիւթէր զնենգութիւն։

Նստեալ զեղբարբ քումբ չարախօսէիր * և 'ի վերայ որդւոյ մօր քոյ դնէիր գայթակղութիւն.

Զայս ամ̃ արարեր և լռեցի քեզ * կարծեցեր անօրէնդ 'ի մտի քում թէ և ես քեզ նմանեցայ։

Յանդիմանեցից և կացուցից զայս ամ̃ առաջի քոյ * իմացարուք ամենեքեան որոց մոռացեալ էիք զա̃ծ.

Գուցէ երբէք յափշտակեսցէ * և ոչ ոք իցէ որ փրկեսցէ.



Այսինքն, դու միշտ կուռնասէիր և քոյ եղբօրդ և քոյ ընկերիդ վասնաէիր * և քոյ մօր զաւակին վերայ եկեղեցւոյ որդւոցն վերայ գայթակղութիւն կուդնէիր քո հերձիք խօսքերովդ, և կու թերահաւատացնէիր զիւրեանք.

Այսինքն, զայս ամէն չարիքս արարիր, և ես քեզ համբերեցի, և երկայնամիտ եղայ, լինի թէ դու դարձ գաս * բայց դու անօրէնդ այնչափ լրբեցար և յանդգնեցար, որ քոյ մտացդ մէջն այնպէս կարծեցիր թէ ես այլ քեզ կու նմանիմ. իբր այնոր համար չեմ պատժեր և պատուհասեր զքեզ, որ քո անօրէն կենցաղավարութիւն ինձ դուր կուգայ, բայց վայ քեզ որ կու խաբուիս 'ի քոյ մոլորեալ մտացդ.

Այսինքն, ահա այժմ ես զքեզ կու յանդիմանեմ, և քո արարած չարութիւնն քոյ առաջեդ դնելով զքեզ կու դատապարտեմ * զայս լսելով իմացէք ամէնքդ որ մոռացերէք զա̃ծ, և թողելով զձեր յիմարութիւնն զգուշ կացէք.

Այսինքն, որ չի լինի թէ ձեր կենաց վերջին հասանի, և մահն զձեզ յափշտակէ և տանի 'ի դժոխս * և ոչ ոք չի գտնի, որ զձեզ կարենայ փրկել, 'ի տան

ջնջեաց և 'ի գերութենէն սատա
նայի.

Այսինքն, և գոհացէք որ օրհնու
թեան և գոհութեան պատարագն
միայն զիմ սիրտս կու փառաւորէ
և կու զօրացնէ * և այն ատեն
է ճշմարիտ ճանապարհն, որ զիմ
Աստուծոյն փրկութիս նշանց կու
տամ իմ երկիւղած ծառայիցն.
Երբ կու փրկեմ զիրենք 'ի դժոխոց
և յաւիտենական կենացն արժա
նի կանեմ զիրենք.

Իբր, զայս սաղմոս մինչև 'ի
վերջն իմացն դառնիմ է աստցեալ
վասն ապաշխարելոյ զմեղս իւր.
Այս սաղմոսումն ապաշխարութե կու
խնդրէ դառնիմ յոյս զթողութե
մեղաց իւրոց.

Այսինքն, որ Աստուած իմ՝ դատեր
և դատապարտեր զիս քո արդար
դատաստանովդ, այլ խղճամ և
ողորմեա ինձ քո մեծ և անչափ
ողորմութեանովդ և քաղցրութե
նովդ * և քո առատ գթութե
նովդ և մարդասիրութենովդ որ
միշտ զղջացելոց թողութիւն կու
շնորհես, քանի է և ջնջէ զիմ անօ
րէնութիւնս որ գործեցի քոյ առա
ջև.
Այսինքն, և թէպէտ շատ ան
գամ դու ինձ ներեցիր և իմ մե





Պատարագ օրհնու
թեն փառաւոր արաս
ցէ զիս * և անդ է ճա
նապարհ ուր ցուցից
նմա զփրկութին իմ.

Տուն. 24.

'Ի կատարած սաղմոս Դաւթի
'ի ժամանակի երթալ ի նա առ
Նաթան մարգարէ յորժամ
մտեալ էր Նա առ Բերսաբէէ.

Սաղմոս. Ծ:

Ողորմեա ինձ Աստ
ւած ըստ մեծի ողորմութե
քում * ըստ բազում
գթութե քում ջնջեա
զանօրէնութիւնս
իմ.

Առաւել լուա զիս
յանօրէնութենէ իմմէ *

և ՚ի մեղաց իմոց սր-
բեա զիս։

Զանօրէնութիւնս իմ
ես ինքնին գիտեմ *
և մեղք իմ առաջի
իմ են յամ̃ ժամ։

Քեզ միայն մեղայ
տր̃ * և զչար առա
ջի քո արարի։

Որպէս արդար եղի
ցիս ՚ի բանս քո * և
յաղթեսցես ՚ի դա
տելն քո։



ղացն Թողութիւն շնորհեցիր, բայց
ես հեռացեալ իմ մարմնոյս ցան
կութեանն գործելով ապականե
ցի զհոգի իմ, վասն որոյ կաղաչեմ
զքեզ, որ այլև լուացես զիմ հո
գիս քո ողորմութեան սպունգիւ և
յստակես զիս քո շնորհօքդ յիմ
անօրէնութենէն * և յիմ մեղացն
զիս մաքրելով սրբեսցես և ազատես։
Աստուածն, զերծ զիմ գործած
անօրէնութիւն ես ինքնանից գի
տեմ և կու խոստովանիմ * և իմ
մեղքն և յանցանքն հանապազ
իմ աչքիս առաջևն է, և անհ
նարին չեմ մոռանար։
Աստուածն, ես միայն քեզ մեղայ
և քո ամենատես տէրութեանդ
բարկացուցի, և թէպէտ շատ ան
գամ այլոց ևս վնաս հասուցի,
բայց միայն ընդդէմ քո օրինաց և
պատուիրանացն մեղանչեցի * և
քո առաջևդ յանցանաց և չար
գործեցի։
Աստուածն, դու խոստացեր ես
որ ինչ մարդ որ ուղիղ սրտով զզ
ջանաց Թողութիւն շնորհես, ահա
ես զիմ մեղքն և անօրէնութիւն
կու լամ, և կու ապաշխարեմ,
ուրեմն Թողութիւն շնորհէ ինձ,
որ դու քո բանովդ արդար եղե
նիս * և քո ճշմարիտ խոստմունքդ
հաստատ պահելով, յաղթես այն
պիղծ մարդկանց կարծիքն, որ

իւր

խարեանց մտաց միջումն կու գա անն գլեղ և կասեն, թէ ած չէ թէ իւր ամենատես ողորմութն և բարութնն համար, այլ մեր արժանաւորութնն համար կու ներէ մեր մեղացն, և մեզ երկնային բարիք կու պարգևէ.

Այսինքն, դու գիտես որ ես անօրէնութենով յղացայ, իբր ադամային մեղացն և պարտաւորութեն ստրկանեցայ իմ մօր արգանդն ※ և իմ մայրս նոյն մեղաց մէջն ծնաւ զիս, որ պատճառ լինելով չար եաց, մէջս կու յօժարեցնէ զիմ բնութիս դէպ 'ի մեղքն.

Այսինքն, որով հետև դու որ ած զճշմարտութին կու սիրես, ճշմարտութենով խոստմ քու տաջեր, ես թէ որ իմ կամաւս և յօժարութենովս չի հաւանեի մեղացն, ադամային յանցանքն զիս ուժով չեր կարեր ձգել 'ի մեղս ※ և մանաւանդ զի դու քու օրինաց և պատուիրանաց անյայտ և ծածուկ խորհրդներն ինձ յայտնեցիր, և զիս 'ի մեղաց և 'ի չար գործոց զգուշացուցիր.

Սամ թէ դու որ ած որ մէջս ճշմարտութին կու սիրես, ասա զիմ սրտիս ճշմարտութիւնն զիմ հաւատքն, զիմ պարզամտութին դէպ առ քեզ, զիմ յոյս, և զիմ սէրն ※ դու գիտես, որ երբոր

Անօրէնութեամբ յղացայ ※ և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ.

Դու որ զճշմարտութի սիրեցեր ※ զանյայտս և զծածկեալս իմաստութե քո յայտնեցեր ինձ.

դու

Ցօղեա՛ յիս մշտկաւ և սուրբ եղէց * լուա՛ և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի արա՛ ինձ զցնծութիւն և զուրախութիւն * և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց * և զամ՟ անօրէնութիւնս իմ ջնջեա՛։

դու քո սուրբ հոգւովդ քո խնամ տուն անձնայս և ծածուկ խորհրդներին, երբ քեզ միածնի որդւոյդ անօրէնութիւնքն ինձ յայտնեցիր և խնայեցիր, ինչպէս ես շուտով ուղիղ հաստատուն հաստատցի քեզ։

Այսինքն, ուստի կաղապարելով զքեզ դու բոլոր սովորութեամբ մոլեխական օրհնեսցեն քեզ միածնի որդւոյդ պատուական արեանն միջնորդ ինձ վերայ ցօղէ, երբ զայլայ անունն խաղի փետրուն ինձ մի ցանէ, որ ես որբիլիմ * և քեզ սուրբ հոգւոյդ շնորհաց ջրովն լուա՛ զիմ հոգիս որ քան զձիւնն սպիտակ լինիմ։

Այսինքն, իմ մտացս և իմ խղճմտանքիս քու մխիթարիչ հոգւոյդ զայն երկնային ցնծութիւն և ուրախութիւն լսեցուր, որ ես ՚ի պատճառս մեղաց և անօրէնութեանց իմոց կոտրուած * և իմ տառապեալ ոսկերքս - երբ իմ հոգւոյս նուաղած և ակարացած զօրութիւնքն, կրկին քու շնորհաց քաղցրութիւն առնելով, զօրեղանան ուժեղանան և ցնծան։

Այսինքն, քու բարկացած երեսդ իմ մեղացս դարձուր և անտես արա՛ զիմ յանցանքս * և զիմ ամէն չարութիւնս և անօրէնութիւնս քու սուրբ մեծութեամբդ ջնջէ և քաւէ, զի երե [illegible]

Աստուածը, բարձ ինձանից զայս կեղտոտ սիրտս, և իմ միջումս մէկ այնպէս յիստակ սիրտ հաստատէ, որ միշտ զբարին կամենայ և ՚ի չարէն հեռանայ ✻ և իմ փորումս մէկ ուղիղ հոգի մի նորոգէ, իբր զայս իմ ապականած կամքս վեր առ ինձանից, և մէկ այնպէս ուղիղ կամք տուր, որ ոչինչ համարելով աշխարհիս հեշտութիւնն միայն իւր փրկութեան և քոյ փառացդ ցանկայ և փափագի.

Աստուածը, զիս քոյ երեսէդ մի՛ ձգեր ս͞ր Ա͞Ծ, և քոյ Ա͞Ծային խնամքէդ մի՛ հեռացներ ✻ և քոյ մխիթարիչ ս͞ր հոգւոյդ շնորհքներն ինձնից մի՛ հաներ.

Աստուածը, այլ կրկին տուր ինձ քոյ փրկութեան ցնծութիւնն, իբր զայն ցնծութիւնն որ ես քոյ փրկչէդ վե՛ր ունէի յառաջ քան զմեղանչելն իմ, զերէ մարգարէական հոգւով տեսներէի որ նա իմ զարմէս պիտի ծնանիլ, և միշտ նորա վերայ կուրախանայի ✻ և քոյ իշխանութեան հոգւովն, իբր քոյ այն առաջնորդող կառավարող և զօրացնող հոգւովդ զիս հաստատէ ՚ի նոյն հաւատն և ՚ի խելքն.

Աստուածը, որ ես անօրէն մարդկանց քոյ ողորմութեան քոյ գթութեան և քոյ երկայնամտութեան կերպն և ճանապարհն ուսուցա

Զ սիրտ ս͞ր հաստատեա յիս Ա͞Ծ ✻ և զհոգի ուղիղ նորոգեա՛ ՚ի փորի իմում.

Մի ընկեներ զիս յերեսաց քոց ✻ և զհոգի ս͞ր քո մի հաներ յինէն.

Տուր ինձ ցնծութիւն փրկութեան քոյ ✻ և հոգւով իշխանութեան քո հաստատեա՛ զիս.

Ուսուցից անօրինաց զճանապարհս քոյ ✻ և ամպարիշտք առ քեզ դարձցին.

նեմ,

Փրկեա՛ զիս յարենէ Աստուած, Աստուած փրկութեան իմոյ ※ և ցնծասցէ լեզու իմ յարդարութիւն քում.

Տէ՛ր եթէ զշրթունս իմ բանաս ※ բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո.

Թէ կամեցեալ էիր զպատարագս մատուցանէաք ※ բայց դու ընդ ողջակէզս խնկ ոչ հաճեցար.

քաղաքդ * և մինչև հիմն հաստա
ցէք որ այլ ձայր չի լինի շինելոյ.
Այսինքն , և դու ով ողորմելի
զարմդ և զաւակդ բաբելացւոց
* երանի այն ժողովրդեանն որ
խնդրելով զվրէժ արդար դա
տաստանինն այ , փոխանակ այն չար
եացն որ դու մեզ հատուցեր ,
քեզ հատուցումն անէ.
Այսինքն , երանի կասեմ այն
յաղթող ժողովրդեանն , որ ինչ
պէս որ դու մեզ արարեր * այն
պէս այլ նա քեզ անէ , և զքո
երեխայքդ բանէ , 'ի քարին զար
կէ և զպլխներին ջնջխէ.

Իբր զայս սաղմոս դաւիթ է շա
րադրեր , և երգեր.
Այս սաղմոսումն շնորհակալ կու
լինի մարգարէն զայն վասն բարե
րարութեն նորա.

Այսինքն , կու խոստովանիմ տէր
ամ բոլորով սրտիւ զքո անչափ
գթութիւն և բարերարութիւն
որ ինձ արարեր * և առաջի հրեշ

ռակաց քեզ սաղմոս կասեմ, երբ առաջի քերոբէիցն քանութն , առաջի քահանայից , և առաջի երկնային զօրութեանց .

Ամենայն , դու մինչև ցայսօր զիմ բերանիս խօսքն լսեցիր , և զիմ ամեն խնդրուածքս կատարեցիր * ուստի շնորհակալ լինելով հիմի կու երկրպագանեմ քեզ ս͞ր տաճարիդ * և կու խոստովանիմ քո սուրբ անուանդ , վասն քո անչափ ողորմութեանդ , և վասն քո ճշմարիտ խոստմանցդ .

Ամենայն , դու փրկելով զիս ՚ի ձեռն յի͞ ք͞ի որդւոյ քոյ , զքո սուրբ անունդ մեծացուցիր և փառաւորեցիր , ոչ միայն ՚ի մէջ հրէից , այլև ՚ի մէջ հեթանոսաց * որդ կու աղաչեմ զքեզ , որ այն օրն որ ես իմ նեղութ͞ն մէջումն դէպ քեզ կու աղաղակեմ , դու շուտով ինձ ականջ արա * և իմ անձիս շատ ուժ և կարողութի տուր , որ ես ուղիղ սրտով զքեզ օրհնեմ և փառաւորեմ .

Ամենայն , զքո անչափ մեծութեդ և անչափ կարողութիւնդ աշխարհիս ամեն թագաւորքն և իշխանքն կու խոստովանին * զերբ լսեցին զքոյ բերանիդ խօսքերն , երբ զքո անճառապատմական քաղցրութեդ * և կու օրհնեն և կու պատուեն քոյ ճանապարհին օրինաց և

ցից քեզ .

Զի լուար զբանս բերանոյ իմոյ * երկիր պագից ՚ի տաճար ս͞ր քո * և խոստովան եղէց անուան քում վասն ողորմութեան և ճշմարտութեան քոյ .

Մեծ արարեր յա͞մ զանուն սուրբ քո * յորում աւուր կարդամ առ քեզ վաղվաղակի լուր ինձ * և բազում արարեր զօրութիւնս յանձն իմ .

Խոստովան եղիցին առ քեզ տ͞ր թագաւորք երկրի * զի լուան զբանս բերանոյ քո * և օրհնեսցեն զճանապարհս քո .

Մե՜ծ են փառք տն * բարձր է՛ տր զխո նարհս տեսանէ * և զամբարտաւանս ՝ի հեռաս տանէ ճանաչէ.

Թէ և գնացից ես ՝ի մէջ նեղութեան * կե ցուսցես զիս ՝ի բար կութեան թշնամւոյն.

Ձգեցեր զձեռն քո և փրկեացզիս աջ քո * և տր հատուսցէ ընդ իմ.

Տր ողորմութիւն քո յաւիտեան * զգործս ձեռաց քոց մի՛ ան տես առներ.

Տուն : Ը.

պատուիրանաց ճանապարհներն.

Մտածեմ, և կասեմ, թէ մեծ և անչափ է տյ փառքն և պատիւն * թէպէտ բարձր և անհասանելի է, բայց երկրիս վերայ եղած հողեղէն խոնարհ մարդիկն կու տեսանէ, կու սիրէ և կու վարձարէ * և բարձրամիտ և հպարտ մարդիկն հեռու տեղաց կու ճանաչէ, կու ատէ, և կու պատուհասէ.

Մտածեմ, թէ որ մարդկային տկարութե և կամ ՝ի նենգութե երևելի և աներևոյթ թշնամեաց ՝ի մէջ վտանգի և նեղութեց այլ անկանիմ * բայց յոյս հաստատուն է՛ որ դու զիս փրկես իմ թշնամեաց բարկութենէն և նոցա ամբարտաւան խօսքերէն.

Մտածեմ, զէրէ քանի որ դու իմ փորձութեան և հալածանաց միջոցումն զքո պաշտպանողական ձեռքդ տարածեցիր, և քո աջ բազկովդ զիս փրկեցիր * ես զքո բացայայ հաւատամ և ասացի, ահա ինչն որ ստացած ինձ տեղ ինչն իմ թշնամեացն վերէ կու խնդրէ և հատուցումն կանէ.

Մտածեմ, որ քո ողորմութիւնդ յաւիտենական է * զքո ստեղծուածքդ և զքո հաստատեալ ձառայքդ մի՛ անտես առներ այլ քո ստացուածոյին շնորհաց

օգնականութիւն 'ի թիկունս հա
ւր նոցա.

Իբր, զայս սաղմոս մինչև 'ի
վերջն դաւիթ է ասացեր.
Այս սաղմոսումս կոյ արդարա
ցուցանէ զինքն դաւիթ առաջի
այ վասն իւր անմեղութենն և ու
ղիղ վարուցն.

Ամենայն, որ ած դու զիս
փորձեցեր իմ ազգայու
թենն 'ի վեր, և զիմ
բարս և բնութիւն ճանաչեցեր
* դու ճանաչեցեր զիմ ամէն
գործս և արարմունս և զիմ
նստելն և զիմ վերկենալն.
Ամենայնն, դու զիմ խորհուրդս
և մտածմունս 'ի հեռաստանէ,
իբր 'ի բարձրութէ երկնից խնա
յար * զիմ շաւիղս, իբր զիմ
իղս և զիմ վիճակս, իբր զիմ ճիղս
և զիմ բռնացուածս դու քննե
ցեր * և զիմ ամէն կենցաղավա
րութեան ճանապարհն յառաջա
գոյն, իբր 'ի յաւիտենից և յա
ռաջ քան զլինելն աշխարհի ան
սար * և գիտացեր որ իմ պտուղն
և իմ ընդդէմ նենգութի և խա
բէութի չկայ.
Ամենայն, աշա դու որ ած
ճանաչեցեր զիմ յետինն և զիմ

առաջ



Ի կատարած դաւթի:

Սաղմոս. ՃԼԸ:

Տէր փորձեցեր
զիս և ծանե
ար զիս *
դու ծանեար
զնստելն իմ, և զյ
առնելն իմ.

Դու միտ առեր զխոր
հուրդս իմ 'ի հեռաս
տանէ * զշաւիղս իմ
և զվիճակս իմ դու
քննեցեր * և զամ
ճանապարհս իմ յառա
ջագոյն տեսեր * զի
ոչ գոյ նենգութի
'ի լեզուի իմում.

Ահա դու տէր ծան
եար զյետինսն իմ և

զաստուածային իմ * դու ստեղծեր զիս * և եղիր զենուած քո խնկոց իմ.

Սքանչելի եղև գիտութիւն քո յինէն * զօրացաւ, և ոչ հանդարտիմ առնա.

Ո՞ւր երթայց ես յոգւոյ քումմէ * կամ յերեսաց քոց ես յո՞ փախիցեայց.

Թէ ելանեմ յերկինս դու անդ ես * և թէ իջանեմ ՚ի դժոխս, և անդ մօտ ես.

Թէ առից զթևս իմ ընդ առաւօտս, և բնակեցայց յեզերս ծովու.

Սակայն և անդ ձեռն



աստուածային, իբր զիմ փափաքանսն և զիմ բաղձանսն, զիմ վերջին արարմունքն, և զիմ աստուածային գործքն * դու զիս յօժարէ ընդունեցիր * և քոյ ամենայն և նախախնամողական ձեռքդ ինձ վերայ պահեցիր.

Այսինքն, քո ամենատեսութիւնդ և քո ամենագիտութիւնդ շատ ըսքանչելի և զարմանալի թուաց ինձ * և այնչափ զօրացաւ և բարձրացաւ, որ չեմ կարեր հասանիլ նմա, կամ զիմ միտքս հանդուցանել և հանդարտեցուցանել.

Այսինքն, ուր կարեմ ես գնալ որ քոյ անտեսութեան և խնամութեն հոգւոյդ իմ արարմանցն և իմ խորհրդոցն վերահասու չի լինի * կամ թէ ես քո երեսէդ ինչ տեղ կարեմ փախչիլ, որովհետև դու ամ տեղ պատրաստ ես.

Այսինքն, թէ ելանեմ ես մինչ ՚ի յերկինս, դու անդն պատրաստ ես փառաւորեալ ՚ի քոյ ամենայն աթոռումդ * և թէ իջանեմ ՚ի դժոխս դու անդ մօտ ես քո արդար դատաստանովդ պատժելով զմեղաւորս.

Այսինքն, թէ որ ես թռչնոց նման թև առնում և թռչիմ առաւօտէնց յարևելից մինչև յարևմուտս, և գնամ բնակիմ յանդնդական ծովի եզերքն.

Այսինքն, սակայն անդն ես քո

Աստուծոյին նախախնամութեան ձեռքն ինձ կու առաջնորդէ 'ի Ճանապարհս փրկութեան * և քո ամենակարող աջդ զիս կու ընդունի և կու պահպանէ.

Այսինքն, ասացի իմ մտացս մէջն մի թէ գիշերվան խաւարն զիս ծածկեց մի, որ զիմ խորհուրդն և արարմունքն Ած չի տեսանէ * կամ թէ գիշերն փոխանակ լուսոյ, երբ գիշերն ցերեկվան նման զիմ մարմնաւոր փափկութեն և հեշտութեն մեղքն և յանցանքն հրապարակեց և յայտնեց մի տաջի ոյ.

Այսինքն, բայց խաւարն քու առաջևդ մութ չի կարեր անել * և գիշերն ցերեկի նման կու լուսաւորվի քու հրամանաւդ * և գիշերվան խաւարն այնպէս կ'երեւ ինչպէս ցերեկվան լոյսն.

Այսինքն, դու միայն իմ սրտիս և երիկամունքներիս այլ տիրապետեցիր, երբ զիմ ամէն խորհուրդս և զմտածմունքս Ճանաչեցիր * և զիս իմ մօրս փորէն ծնանելէն 'ի բաց ընկալար ընդունել և նախախնամել.

Այսինքն, ու ասի կու խոստովանիմ զքու անչափ կարողութիւնդ և զքու անչափ իմաստութիւնդ, զերն ահեղ և ըսքանչելի ես * և քու գործքդ և արարմունքդ ըսքան-

չելի



քո առաջնորդեսցէ ինձ * և աջ քո ընկալցի զիս.

Ասացի խաւար ուրեմն արդեօք ծածկեաց զիս * կամ գիշեր փոխանակ լուսոյ փափկութեն իմոյ.

Խաւարն 'ի քէն ոչ խաւարեսցի * և գիշերն որպէս զտիւ լուսաւոր եղիցի * և խաւարն նորա որպէս զլոյս նորա.

Դու ստացար զերիկամունս իմ * և ընկալար զիս յորովայնէ մօր իմոյ.

Խոստովան եղէց քեզ տր̄ զի ահեղ և սքանչելի ես * սքանչելի են գործք քո * և անձն իմ ճանաչէ յոյժ.

Ոչ թաքեաւ ոսկր իմ ՚ի քէն զոր արարեր ՚ի ծածուկ * և կազմութիւն իմ ընդ ստորինս երկրի.

Զանգործս իմ տեսին աչք քո * և ՚ի գիրս քո ամենեքեան գրեսցին.

՚Ի տուէ մոլորեսցին * և ոչ ոք էր որ առաջնորդէր նոցա.



չելի և զարմանալի են * մա՛ որոց իմ հոգիս սաստիկ սիրով սիրեց զգեղ.

Աստուածն, ես ոչինչ ոսկր չունիմ իմ բոլոր մարմնոյս մէջն թաղած որ քեզ յայտնի չի լինի * զէրէ դու զիմ զօրութիւնն և կարողութիւնն կու ճանաչէիր երկրի տակումն, երբ քանի որ դեռ պարզ նիւթ էի հողի մէջումն, և դեռ զիս չէիր կազմեր իբրև զմարդ.

Աստուածն, զիմ դեռ չի խորհած և դեռ չի գործած գործքն և արարմունքն քո ամենատես աչքդ տեսաւ * և ինչ որ ես արարեր եմ և առնելոց եմ, ամէնն քո արդար դատաստանիդ գրքումն գըրած է.

Աստուածն, բայց զքո ամենակարող զօրութիւնդ և զանչափ բարութիդ անգիտանալով բազումք ՚ի հրէից և ՚ի հեթանոսաց, անսանելով զքո փրկագործութիւն լուսաւոր ցերեկն, երբ զմարդեղութիւն որդւո՛յ քո միածնի և ըզքարոզութիւն սրբոց առաքելոց մոլորեցան կուռութե նախանձու և կամապաշտութեան * և ոչ ոք չի կայր նոցա միջումն ածային գրոցն գիտակ և տեղեակ որ առաջնորդէր նոցա, և ցուցանէր զճանապարհն ճշմարտութեան.

Աստ

Այսինքն, բայց իմ մտաց մի- ջումն սաստիկ մեծարելի և պա- տուելի եղան քո բարեկամքդ տր ած, իբր քո սուրբք և ընտիր ծա- ռայքդ * և մանաւանդ նոցա իշխանքն, իբր սբ առաքեալքն, որ սաստիկ զօրացան երկնային իշ- խանութեամբ և անմահական փառօք։

Այսինքն, Թուեցից զնոսա իմ մտաց միջումն և անեղայ որ քան զծովի աւազն, իբր քան զնեղ- սասէր հրեշտակն շատ են * զար- թեայ 'ի յափշեցմանէս, և հա- սակեցայ յառաւօտ * և այժմ ու- ղիղ սրտով քեզ հետ կայացեալ եմ տր ած։

Այսինքն, ո՛վ տր ած թէ դա- տես զմեղաւորս և ամբարիշտ մարդիկն բարկանանելիս և կորուսանելիս * եւ սպառ կասէլի և համարձակու- թը կասէլի նոցա, թէ ո՛վ անի- րաւ և արիւնահեղ մարդիկք հե- ռացէք ինձանից, այլև յայնժամ մի բարի մարդկանցն որ ուղիղ սրտով այ կու ծառայեն։

Այսինքն, զերբ այնպիսի մար- դիկն հակառակութեամբ և չար նախանձով քոյ հաւատացեալ ծա- ռայից քաղաքներին փոխ և անի- րաւ սերց կամենան կու յափշտա- կեն և կու տիրապետեն։

Այսինքն, ես տր ած զնշմա





Ինձ յոյժ մեծարոյք եղեն բարեկամք քո ած * և յոյժ զօրա- ցան իշխանք նոցա։

Թուեցից զնոսա և քան զաւազ բազմա- ցան * զարթեայ և արդ ընդ քեզ եմ։

Թէ սպանանես զմե- ղաւորս ած * արք արեանց ի բաց եղե- րուք յինէն։

'Ի հակառակութիւն 'ի նախանձ առցեն 'ի նանիր զքաղաքս քո։

Զատելիս քո տր

ատեցի * և ՚ի վերայ
թշնամեաց քոց մա-
շեցայ ․

Զատելութիւն կատար-
եալ ատեցի զնոսա *
և եղեն ինձ թշ-
նամիք ․

Փորձեա զիս ած և
ծանիր զսիրտ իմ *
քննեա զիս, և ծանիր
զշաւիղս իմ * և տես
թէ իցեն անօրէնու-
թիւնք ՚ի ճանապարհս
իմ * և առաջնորդեա
ինձ ՚ի ճանապարհս
քո յաւիտենից ․
Տունք ․ 22

՚Ի կատարած աղօթս դարձ Թ

Սաղմ ․ ՃԼԹ ․

Ապրեցո զիս տր ՚ի
մարդոյ չարէ * յառ-
նէ անիրաւէ փրկեա
զիս ․

Խորհեցան զանօրէ-
նութիւն ՚ի սիրտս իւր



բխան ատեմ, միշտ զքո ատելեաց
ատեցի * և քոյ թշնամեաց արար-
մանցն վերայ հալեցայ և մաշեցայ
նախանձու ․
Այսինքն, կատարեալ ատելու-
թը ատեցի զնուրեանս, զի նա
խանձու ճշմարտութե * և նր
համար ամենքն ինձ հեռթշնամի
դարձան ․
Այսինքն, որ ած փորձէ զիս
և ճանաչէ զիմ սիրտս * քննէ
զիս և ճանաչէ զիմ շաւիղս * և
տես թէ իմ կենցաղավարութե
ճանապարհումն անօրէնութիւն
կայ մի * և այսպէս առաջնորդէ
ինձ ՚ի քո յաւիտենական ճանա
պարհն, որ ՚ի կեանսն յաւիտե-
նից ․

Իբր, դայս սաղմոս մինչև ՚ի
վերջն դաւիթ է ասացեր ․
Այս սաղմոսումս կու աղաչէ
մարդարէն զած ազատել ՚ի չա
րութէ և ՚ի դրպարտութէ մարդ-
կան որը ՚ի զուր խօսէր ․

Այսինքն, պահեսցուր զիս տր
ած ՚ի նենգաւորը և ՚ի չար մարդոյ
ձեռաքէն * և անիրաւ մարդոյ
ճնարագիտութէն փրկէ և ազա
տէ զիս ․
Այսինքն, զերծ իմ բուրեանց սրտի
միջումն չարութե և անօրէնու-

թիւն

թիւն խորհեցան * և այն 'ի բուռն զինուորք պատրաստեցին , որ ինձ հետ պատերազմեին և հակառակեին ։

Այսինքն , սրեցին իւրեանց լեզուն ինձ վերայ կառապած օձի նման * և իւրեանց շրթունքի տակումն իժ օձի զէհր գաղեցին , որ զիս իւրեանց ննենգաւոր խօսքերովն վիրաւորեին ։

Այսինքն , պահէ և պահպանէ զիս տէր մեծ մեղաւոր մարդկանց ձեռքէն * և չար մարդկանց հնարագիտութենէն և փորձանքէն զիս ազատէ ։

Այսինքն , խորհեցան իւրեանց սրտի միջումն որ զիմ քարի սովորութենց և կենդանաւորութենց քայլքն և գնացքն խափանեն * և ամբարտաւան և անխղճմտանք մարդիք ինձ թագուն թակարդ դրեցին ։

Այսինքն , իմ ոտքերիս առաջևն լարեր և քրեր պատրաստեցին որ զիս որսան * և իմ շուրջ եկած ճանապարհն գայ և փոս արացին , որ զիս 'ի վայր ձգեն և կործանեն ։

Այսինքն , զայս աղաչելով դէպ քեզ աղաղակեցի և ասացի թէ տէր , դու իմ տէրն ես * դու ականջ արա իմ աղօթից և պաղատանաց ձայնին ։





եանց * զոր ամէն այն պատրաստեցան 'ի պատերազմ։

Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի * և թոյն իժից 'ի ներքոյ շրթանց նոցա ։

Պահեա՛ զիս տէր 'ի ձեռաց մեղաւորի * և 'ի մարդոյ չարէ փրկեա զիս ։

Խորհեցան խափանել զգնացս իմ * թագուցին ամբարտաւանք որոգայթ ինձ ։

Լարս ձգեցին յորոգայթ ոտից իմոց * շուրջ շաւիղս 'ի մուտս եդին ինձ գայթագղութիւն ։

Ասացի տէրդ իմ ես դու * ունկն դիր տէր ձայնի աղօթից իմոց ։

Տէ՛ր տէր զօրութիւն փրկութեան իմոյ * հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի ·

Մի՛ մատներ զիս տէր ի ցանկութենէ մեղաւորաց * ըստ խորհրդեան մտաց իմ , մի՛ ընդ վայր հարկաներ զիս · Զի մի՛ երբէք բարձրասցին * և խորհուրդք նոցա մի՛ կատարեսցին * վախճան կատարածի նոցա վաստակ շրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա

Արկցես ի վերայ նոցա զկայծակունս հրոյ և կործանեսցես զնոսա * ի տառապանաց մի՛ կարասցեն կեալ ·

Մարդոյ լեզուանւոյ մի՛ յաջողեսցի ի վերայ երկրի * զայր մեղաւոր չարիք իւր որսասցեն ի կորուստ ·

Ծանեաց զի առնէս տէր զդատաստան աղ



Այսինքն , ո՛վ տէր դու իմ փրկութիւն և ազատութիւն ուժն և կարողութիւնն ես * և դու պատերազմի և կռուի օրն իմ գլխոյս երկաթէ սաղավարտն ես և պահապանն ես ·

Այսինքն , դու ո՛վ տէր իմ թշնամեաց ցանկութեանն գործոյ զիս մի՛ մատներ նոցա ձեռքն * և նոց խորհրդոցն գործոյ զիս ստոյց կախան մի՛ աներ ·

Այսինքն , որ չի լինի թէ բարձրանան * և չի լինի թէ նոց խորհուրդն կատարվի * նոցա չար գլխաւորութեան վախճանն որ է նոցա հայհոյել շրթանց վաստակն, զիւրեանք ծածկէ , իբր զիւրեանք յանձն անէ և պատուհասէ ·

Այսինքն , դու նոցա վերայ քո բարկութեան կրակի կայծակներն թափէ , և կործանէ զիւրեանք * որ իւրեանց ծանր տառապանքէն չի՛ կարենան փրկվիլ և ազատվիլ ·

Այսինքն , լեզուանի մարդն ամենևին երկրիս վերայ աջողութիւն չի՛ տեսանէ * և զմեղաւոր մարդն իւր չար գործքն և նա բաղխտութիւնն որսան և կորուսանեն հոգևով և մարմնով ·

Այսինքն , գիտեմ ես ճանաչեցի և իմացայ տէր աստուած որ

դու աղքատ մարդուն արդար դատաստան կանես * և ՚ի մեծութէն անկած մարդոյ իրաւունքն կու տեսանես.

Այսինքն, քո արդար և ընտրեալ ծառայքն միշտ կու գոհանան քեզանից, և կու օրհնեն ըզքո սուրբ անունդ * և ուղիղ սրտով մարդիկ կու բնակին ՚ի յերկինս առաջի քո երանական տեսութենդ.

Իբր, զայս սաղմոս մինչև ՚ի վերջն դաւիթ է ասացեր.

Այս սաղմոսովս կու աղաչէ մարդարէն զած որ լսէ իւր աղօթքին և տայ ինքեան զճանապարհս զգաստութեն.

Այսինքն, որ ած ես զքեզ քեզ աղաղակեցի լսէ ինձ քոյ ողորմութեամբդ * և երբոր ես առ քեզ կու գոչեմ, շուտով նայիր և ականջ արա իմ աղօթից և խնդրուածոց ձայնին.

Այսինքն, իմ աղօթքս անուշահոտ խնկի նման ուղիղ դէպ քեզ ելանէ, և քոյ առաջևդ ընդունելի լինի * և իմ ձեռաց տարածումն այնպէս քաղցր թուի քեզ ինչպէս երեկոյան պատարագն որ ընտրելոցն մովսէսիւ քեզ կու մատուցանէին.



քաց * և զիրաւունս տնանկի.

Արդարք գոհասցեն զանուանդ քում * և բնակեսցեն ուղիղք առաջի երեսաց քոց.

Տուն. 14.

Կատարած սաղմոսութեան:

Սաղմոս. ՃԽ:

Տէր կարդացի առ քեզ և լուր ինձ * նայեաց ՚ի ձայն աղօթից իմոց ՚ի կարդալ իմում առ քեզ.

Ուղղեսցին աղօթք իմ որպ խունկ առաջի քո որ * համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի.

Դիր Տէր պահապան բերանոյ իմոյ * և դուռն ամուր շրթանց իմոց, զի մի խոտորեսցի սիրտ իմ բանս չարութեան.

Պատճառել պատճառս մեղաց ընդ մարդս որք գործեն զանօրէնութիւն * և ոչ եղէց կցորդ ընտրելոց նոցա.

Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ, և յանդիմանեսցէ * իւղ մեղաւորի մի՛ օծցէ զգլուխ իմ * այլ աղօթք իմ ընդ կամաց նոցա.



Աղաչեմ, որ ամ(ենակալ) դու իմ բերանիս զքո երկիւղդ պահապան դիր * և իմ շրթունքիս դուռն քո շնորհօքդ ամուր պահէ, որ չի լինի թէ իմ սիրտս զանազան չար խորհրդներով ծածկի ընդդէմ քոյ ամենայն հաճութեանդ և թէ անվայել և անպարկեշտ խօսքեր բարբառեցուցանէ.

Աղաչեմ, որ պատճառեմ ըմպատճառս մեղաց, իբր իմ յայնի գործած մեղացն պատճառ գտանեմ և զիս քոյ առաջև արդարացուցանեմ, այնպիսի կեղծաւոր մարդկանց նման, որ հանապազ անօրէնութիւն գործելոյ յետևէ են, և զիւրեանց մեղքն և յանցանքն առաջի մարդկան իբրև արդարութիւն կու գովաբանեն * և չի լինի թէ ես ևս նոցին ընտրութեան և մոլորած խորհրդոցն կցորդ և մասնակից լինիմ.

Աղաչեմ, այլ մանաւանդ զիմ սխալանքս յանձն առնելով համբերեմ, երբոր քո օրինաց արդարացեալ մարդասէրքն զիս խրատեն և զիմ արարած մեղքն և անօրէնութիւնս իմ աչաց առաջևն դնեն, և զիս յանդիմանելն քաղցրութեամբ և ողորմութեամբ * բայց մեղաւոր մարդկանց իւղն զիմ գլուխս չի՛ օծէ, իբր նենգաւոր և խորամանկ մարդկանց խաբէու-

Թեան եւ երեսպաշտութն խօս քերն զիմ միտքս չի մոլորեցուցանէ, եւ զիմ հոգիս չի կորուսանէ * այլ աղօթքս իմ 'ի կամն նմա, իբր ինչպէս որ նոցա կամեն է, որ այլք խուրեանց համար միշտ բարի խնդրեն թէ եւ խուրեանք չար են, ես զիմ աղօթքս քեզ կուամատուցանեմ, որ նոցա ուղղութի եւ զգաստութի պարգեւես, բայց'քանի ոն մերոյ յի քի որ ասէ բարի արարէք ատելեաց ձերոց, եւ աղօթս արարէք 'ի վերայ այնոցիկ որք ըկեն զձեզ:

Նաւսինքն, նոցա դատաստանքն եւ վերակացութն, իբր մովսէս եւ այլք, վասն ոչ փառաւորելոյ զքո արդարութեանն եւ միայնանիշ պատուիրանաց մատնելոյ յերկիրն ամենեաց, իբր 'ի յերուսաղէմ այն վիճի մօտն որ հրամանաւն քո 'ի զարկելն մովսէսի գաւազանով հերձաւ եւ ջուր բխեց վասն իսրայէլացւոց ծարաւելեան. կամ հրեից քահանայապետքն դպիրքն եւ փարիսեցիքն խուրեանց կամապաշտութն համար արդարութեանն եւ միայնի 'ի մէջ մերոյ ատանց մատնելոյ յարքայութին երկնից, հակառակորդ ընդ քի որերմէմ անկեան պատուական, եւ եղեւ նոցա մէմ գլորման եւ մէմ գայթակղութն բաց պետրոսի առաքելոյն,



Կլանեցան մերձ առ վիմին դատաւորք նց * լուիցեն բանից իմոց եւ քաղց րասցին.

Որպէս թանձրութիւն հո-ղոյ զի սփռեալ է 'ի վերայ երկրի ցրուե-ցան ոսկերք նց մերձ 'ի դժոխս.

Զի առ քեզ տէր տէր են աչք իմ 'ի քեզ յուսա ցայ * մի' հաներ զո-գի յինէն.

Պահեա' զիս յորոգայ-թէ որ թաքուցա-ինձ * 'ի գայթակղու-թէ գործողին զա-նօրէնութիւն.

Անկցին 'ի ցանցս նց մեղաւորք * միայն եմ ես մինչև անցից.





քերչին * այս իմ յանդիմանութիւն խօսքերիս ականջ անեն ած-պաշտ և երկիւղած մարդիք և քաղցրանան, իբր խնդան և գո-հանան.

Այսինքն, ինչպէս թանձր անվար և կոշտ երկիրն երբոր կու-վարվի արօրով, կտոր կտոր կու-լինի և կու սփռվի երկրիս երեսին վերայ. կամ ինչպէս աղբն որ է թանձրութիւն և պարարտութիւն արտերին կու սփռվի 'ի վերայ երկրի, այնպէս ցրուեցան ոսկերքն իսրայելացւոց յանապատին մերձ 'ի դժոխս, իբր մերձ 'ի դրունս գերեզմանաց.

Այսինքն, բայց իմ աչքս դէպ քեզ կու նայի տէր ած, և ես միայն 'ի քեզ եմ յուսացեր * դու զիմ մարգարէական հոգիս. կամ ածպաշտութիւն և շնորհաց հոգիս ինձանից մի' հաներ, իբր ինձանից մի' վերառնուր.

Այսինքն, պահէ' զիս այն թալաքէն որ իմ աներեւոյթ թշնամին ինձ համար սարքեր է * և այն գայթակղութենէն որ անօրէնութեան գործօղ և ձեւարօղ սատանայն ինձ պատրաստեր է.

Այսինքն, նորա սարքած թօռի մէջն իւր համախոհ մեղաւորքն անկանին * ես միայն եմ տէր ած, իբր բաց 'ի քէն զօրք հու-

նիմ,

նում, դու ինձ յօգնութիւն հա սեր մինչև որ անցանիմ անձկաս ցս փառաւոր աշխարհս, և հասանիմ 'ի հայրենիսն իմ երկ նային, ուր մխիթարին որ խաղա ղութիւն է և յարաժամեայ խնդու թիւն.

Իբր, զայս սաղմոս դաւիթ է ասացեր խոստովութ. և շնորհօքն ոյ աղօթելով առ ած 'ի մէջ այ րին, իբր 'ի մէջ մաղարային.
Այս սաղմոսումն կու խօսի մար գարէն 'ի բերանոյ արդարոց 'ի մէջ նեղութե, կամ 'ի բերանոյ Քսի 'ի վերայ խաչին.

Այսինքն, ես բարձր ձայնիւ առ տէրն իմ աղաղակեցի * և բարձր ձայնիւ զած հայրն իմ աղաչեցի 'ի վերայ խաչին.
Այսինքն, զիմ աղօթս և պա ղատանս իմ հօր ոյ առաջին կու սփռեմ և կու տարածեմ * և զիմ վիշտն և չարչարանքն նորա առաջին կու պատմեմ։
Այսինքն, երբոր սաստիկ տառա պանքն իմ շունչս 'ի յիս նուա ղեցան դու իմ չարչարանաց և ան տանելի մահուն շաւիղն և կերպն ճանաչեցիր * և խնդրեր որ իմ փրկագործ անորէնութե ճանա պարհումն որ ես կու կենդանա





Ի մտաւորութիւն դաւթի աղօթք 'ի ժամանակի զի էր նա յայրի անդ.

Սաղմ. ՃԽԱ.

Ձայնիւ իմով ես առ Տր կարդացի * ձայ նիւ իմով զՏր աղա չեցի.
Սփռեցից առաջի Տն զաղօթս իմ * և զնե ղութիւնս իմ առաջի նորա պատմեցից.

Ի նուաղել յինէն ոգւոյ իմոյ դու Տր ծանեար զշաւիղս իմ * 'ի ճանապարհի յոր գնայի թաքուցին ինձ որոգայթ.





Հայեցի յաջմէ տեսանէի, և ոչ ոք էր որ ծանուցէր զիս * կորեաւ յինէն փախուստ իմ * և ոչ գտաւ խնդրող անձին իմոյ.

Աղաղակեցի առ քեզ Տէր և ասացի, դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց.

Նայեաց Տէր յաղօթս իմ զի ես խոնարհ եղէ յոյժ * ապրեցո զիս ի հալածչաց իմոց զի հզօրք եղեն քան զիս.

Տէր հան ի բանտէ զանձն իմ * գոհանամ զանուանէ քումմէ.



վարէին խելօրայ երկրի, իմ թշնամեացն ինձ ննջողութիւն թաղել սոր քեցին.

Ասէ մեկնիչն, կու հայէի յաջ կողմն խելօրայ խաչին և կու տեսանէի որ ոչ ոք չէկայր իմ բարեկամ որ զիս ծանուցէր * փախչելոյ և պահանելոյ յոյսն և զխաւարութիւն կորու և հեռացաւ ինձմանից որով հետև իմ բարեկամքն ևս չէին իշխեր մօտենալ առ իս * և ոչ ոք չի գտվեցաւ որ իմ կողմն խօսէր, կամ զիմ անձն խնդրէր, իբր զիս ազատել կամենայր և կամ ինձ ցաւակից լինէր.

Ասէ մեկնիչն, ուստի առ քեզ հայցեցի իմ աղաղակեցի և ասացի, Տէր դու ես իմ յոյսն և իմ միսիթարութիւն յերկրին կենդանեաց, իբր յարութեան քում ամենայնց.

Ասէ մեկնիչն, նայիր ուրեմն Տէր ամենակալ հայրական գթութեամբ իմ աղօթքիս, զէրէ ես սաստիկ տառապանաց և խոնարհութեան մէջումն եմ * և ազատէ զիս իմ հալածող հրէից ձեռաքէն, զէրէ սաստիկ զօրացան ինձ վերայ քոյ ներողութեամբդ.

Ասէ մեկնիչն, Տէր ամենակալ հանէ զիմ հոգիս ի բանտէ գերեզմանէն և ի դժոխոց * որ ես յարուցեալ ի մեռելոց գոհանամ ի քո անչափ բարերարութիւնդ.

Ասա

Աստուածն, զերբ ինձ կուսաղաւոն ՚ոք և որդւոց ամենեքեան, մին և որ միջնորդութ[իւ]ն չարչարանաց և մահուան խոյ զբօ երկնայնն օրհնութիւն փոխանակ մարմնոյ նոցա հատուցանես պսակելով զնոսա անմահական կենօք·

Իբր, զայս սաղմոս այն ժամանակն ասաց դաւիթ, երբոր իւր որդին աբիսողոմ զինքն կու հալածէր·

Այս սաղմոսումս կուխնդրէ մարգարէն զթողութիւն սխալանաց իւրոց·

Աստուածն, որ ամ լոյ իմ աղօթքիս քո ողորմութ[եամ]բդ * և ականջ դիր իմ խնդրուածքիս քոյ ճշմարիտ խոստմանցդ զօրոյ·

Աստուածն, լսէ ինձ քոյ արդարութեանովդ և նէրէ ինձ * և քոյ ծառայիդ հետ դատաստան մի՛ մտաներ, իբր զիմ մեղքս մանրամանաբար մի՛ քններ * զերբ քոյ առաջև դ ոչ կենդանեացմարդ արդարանալ չի կարեր·

Աստուածն, իմ աներեւոյթ թշնամին սատանայ զիմ անձս զանազան փորձութ[եամ]բ և ճնարագիտութ[եամ]բ հալածեց * և զիմ կեանքս

Ի նձ սղանն արդարք մինչև հատուցես ինձ·

Տուղ. 8:

Սաղմոս դաւիթ 'ի ժամանակի զի հալածեալ զնա որդին իւր օրդի նորա:

Սաղմ. ՃԽԲ:

Տէր լուր աղօթից իմոց * ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութ[եամ]բ քով·

Լուր ինձ արդարութ[եամ]բ քով * և մի՛ մտանէր 'ի դատաստան ընդ ծառայի քում * զի ոչ արդարանայ առաջի քո ամ կենդանի·

Հալածեաց թշնամին զանձն իմ * խոնարհ արար յերկիր զկեանս իմ * և նստոյց

զիս 'ի խաւարի ոպ̄ մեռեալ յաւիտենից:

Ձանձրացաւ յիս հոգի իմ * և սիրտ իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինս * խորհեցայ յամ գործս քո * յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ:

Անձն իմ ոպ̄ երկիր ծարաւի է առ քեզ * վաղվաղակի լուր ինձ տր̄ զի նուաղեցաւ յինէն հոգի իմ:



խոնարհեցոյց զեզ 'ի յերկիր, երբ զիմ հոգիս խաւարանօք աշխարհիս մարմնաւոր հեշտութեանցն և վայելչութեանցն հեռանեցոյց * և զիս նստոյց մեղաց ազգոյ և տրտմութեան խաւարի միջումն, ինչպէս մէկ մարդ մի որ յաւիտենից մեռած լինի, երբ շատ ժամանակ 'ի շնորհացն ոպ̄ հեռացած լինի:

Այսինքն, զիմ թշուառութիւն և տառապանքս յիշելով իմ հոգիս ինքնում ձանձրացաւ և զզուեցաւ * և իմ սիրտս սաստիկ տխրութենէն խռովեցաւ, և շփոթեցաւ:

Այսինքն, բայց վասն մխիթարելոյ զիս յիշեցի անցած ժամանակի օրերն որ այնչափ սուրբք և արդարք քեզ հաճոյացութիւն ծառայեցին * խորհեցայ քո ամէն հրաշալի գործքերդ, թէ որչափ խնամք և բարերարութիւն արարեր մարդկային ազգիս * և միտք տարի զքո զարմանալի բաներգործութիւնքդ, և հիանալով զիմ ձեռքս ուղիղ սրտով առ քեզ տարածեցի:

Այսինքն, իմ հոգիս քո շնորհացն կարօտ մնալով այնպէս է դարձեր ինչպէս մէկ ցամաք երկիր մի որ անձրևի կարօտ լինի * վասն որոյ կու աղաչեմ զքեզ որ շուտով զիմ խնդրուածքս լսես

զէրէ իմ հոգիս ամենեւին ՚ի մեղս
նուաղեցաւ.

Առաւօտեան, քո ամենայնին ողորմու-
թեան երեսն ինձանից մի դարձու-
ցաներ * որ չի նմանիմ այնոցիկ
մարդկանց որ զմեղս իւր մեղաց
գնելով կու իջանեն ՚ի դժոխս.

Առաւօտեան, իմ մեղաց ականջին
լսել տուր առաւօտեանց, երբ կա
նաւխ, զքո ողորմութիւնդ և զքո
գթութիւնդ * զէրէ ես ՚ի քեզ միայն
եմ յուսացեր.

Առաւօտեան, ցոյց ինձ քո ամենայնին
օրինաց և պատուիրանաց ճանա-
պարհն, որ ես ըստ քոյ հաճու-
թեանդ կենցաղավարիմ * զէրէ
զիմ հոգիս և զիմ միտքս դէպ քեզ
ուղղեցի.

Առաւօտեան, փրկէ զիս քոյ ամենայնին
գթութիւնդ իմ աներևոյթ թշնա-
մեաց ճարտարագիտութենէն * զէրէ
ես զքեզ ինձ յոյս և ապաւէն
արարի.

Առաւօտեան, ուսո ինձ քո երկնային
շնորհօքդ և խրատէ զիս, որ ես
զքո ամենայնին կամքդ կատարեմ
* զէրէ դու իմ ճշմարիտ Աստուածն
ես.

Առաւօտեան, քո սուրբ և բարի
հոգիդ ինձ առաջնորդէ ՚ի յու-
ղիղ երկիրն, երբ ՚ի յերկիրն կեն-
դանեաց և ՚ի յուղիղ նաւահան-
գիստն յաւիտենական կենաց.

Մի դարձուցաներ
զերեսս քո յինէն *
նմանիցիմ այնոցիկ
որք իջանեն ՚ի գուբ.

Լսելի արա ինձ առա-
ւօտու զողորմութիւն
քո * զի ես ՚ի քեզ Տէր
յուսացայ.

Յայտնի ինձ ճանապարհ
յոր գնացից * զի առ
քեզ Տէր համբարձի
զանձն իմ:

Փրկեա զիս ՚ի թշնա-
մեաց իմոց Տէր * զի
զքեզ ապաւէն ինձ
արարի.

Ուսո ինձ առնել զկա-
կամս քո * զի դու ես
Աստուած իմ:

Հոգի քո բարի առաջ-
նորդեսցէ ինձ ՚ի յեր-
կիր ուղիղ:

Վասն անուան քոյ Տէր կեցուցանես զիս * արդարութեամբ քով հանցես ՚ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ * և կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոյ * զի ես ծառայ քո եմ։

Տունք: 14

Սաղմոս դաւթի առ գողիաթ

Սաղմ. ՃԽԳ.

Օրհնեալ Տէր Աստուած իմ որ ուսոյց զձեռս իմ ՚ի պատերազմ * և զմատունս իմ ՚ի ճակատամարտ։

Ողորմութիւն իմ և ապաւէն իմ, օգնա



Այսինքն, Տէր Աստուած կեցո՛ զիմ հոգիս քոյ սուրբ անուան փառացն համար * և քոյ արդար դատաստանիդ համար զիս որ զղջացեալս եմ, պահեցուր իմ անօրինաց թշնամեաց նեղութենէն.

Այսինքն, քո անչափ ողորմութեամբդ սատակէ՛ և մահացուր զիմ մոլորութիւնն որ ինձ թշնամիքն են * և կորցուր այնպիսի չար ախտերն և չար սովորութիւնն որ զիս կու տառապեցուցանեն * զի ես ՚ի մանկութենէ իմ քո ծառայդ եմ։

Յոր զայս սաղմոս ասաց դաւիթ վասն յաղթահարելոյն ի վերայ գողիաթ.

Այս սաղմոսումս շնորհակալ կու լինի մարգարէն զՏր ՚ի բերանոյ եկեղեցւոյն պատերազմի ընդդէմ սատանայի.

Այսինքն, օրհնեալ և բարեբանեալ լինի իմ Տէրն և Աստուածն, որ ուսոյց զիմ ձեռքս, իբր զիմ բանականութիւնս ՚ի պատերազմ ընդդէմ սատանայի * և վարժեց զիմ մատներս, իբր զիմ միտքս ՚ի կռուամարտութեան ընդդէմ փորձութեանց և հնարագիտութեանց նորա.

Այսինքն, նա է իմ ողորմութիւն, իբր նա է որ ինձ կու գթայ

և կու ողորմի, նա է իմ ապաւէնն, նա է իմ օգնականն, և նա է իմ փրկիչն * ես 'ի նա եմ ապաւինեալ և յուսացեալ, որ զանազան ժողովուրդս աշխարհի իմ ասուրբ հաւատոյս կու հնազանդեցուցանէ.

Այսինքն, որ Տէր ինչ է մարդս որ դու զքո Ածութիւնդ նր յայտնեցիր և խնամ ցուցիր * կամ թէ ինչ է հողեղէն մարդոյ զաւակն որ դու զնա կու սիրես, կու պատուես, և այդ չափ բարերարութիւն կանես.

Դարձեալ ինչ է մահկանացու մարդս, որ դու 'ի ձեռն մարդեղութեան որդւոյ քո միածնի նորա յայտնեցար * կամ թէ ինչ է մեղաւոր մարդոյս զաւակն, որ դու զնոյն միածին որդիդ քո 'ի փրկութիւն նր 'ի մահ մատնեցիր.

Այսինքն, մարդս ոչնչութեան և ունայնութեան նմանեցաւ վասն իւր հպարտութեան և անհնազանդութեան և անբանից հաւասարեցաւ * և իւր կենաց օրերն շուքի նման շուտ շուտ փուչ և անյայտ մոռացմանց մէջուն անց կացին.

Այսինքն, ով Տէր խոնարհեցուր զերկինս, իջիր դու Ածային փառօք և վայելչութեամբ առնելոյ զերկրպագութիւնս ծառայի և իջիր

'ի յեր

կան իմ և փրկիչ իմ * ապաւէն իմ և ես յուսամ 'ի նա, ո՛ հնազանդեցուցանէ զժողովուրդս ընդ ինև.

Տէր ո՞վ է մարդ զի յայտնեցար դու նմա * կամ որդի մարդոյ թէ համարիս ինչ զնա.

Մարդ նանրութեան նմանեցաւ * և աւուրք նր ոպ հովանի անցցեն.

Տէր խոնարհեցո՛ զերկինս և էջ * մերձեցիր 'ի լերինս և ծխեսցին.

Փայլատակեա զփայ լատակունս քո և խռո վեա զնոսա * առաքեա զնետս քո և ցրուեա զնոսա .

Առաքեա զձեռն քո 'ի բարձանց , և փր կեա զիս 'ի ջուրց բազմաց * և 'ի ձեռաց որդ ւոց օտա րաց .

Որոց բերանք խօ սեցան զնան րութի * և աջ նոցա աջ է մեղաց .

ԱԾ յօրհնութիւն

'ի յերկնից առ 'ի փրկել զազգ մարդկայինն 'ի ծառայութենէ մեղաց * և քո աւետարանական քարո զութիւդ տարածելով 'ի վերայ երկրի , մերձեցիր 'ի լերինս , իբր բորբոքէ զգայթակղող քահանա յապետսն հրէից և զփիլիսոփայած իշխանսն հեթանոսաց , որ խոր եանց նախանձու և սրտմտութե մխքումն այրէին և ծխան .

Այսինքն , փայլատակէ զքո փայ լակունս , իբր երկնացուր զքո հրաշքդ և բարձրեալքդ և խռո վեցուր և սասանեցուր զխրոխտանս * առաքէ բոց բարկութեն կայծակ նեռին և նետերն և ցրուէ և փա ցուր զխրոխտանս փառն խրոխտանց կամապաշտութեն .

Այսինքն , առաքէ զքո ձեռդ 'ի յերկնից , իբր զքո սուրբ հո գւոյ շնորհքն զօրութիւն և փրկէ զիս և 'ի շատ ջրերէն , իբր աշխարհիս շփոթմանցն և փորձու թեցն * և յայնպիսի մարդկանց ձեռքէն ազատէ զիս որ օտարաց որդիք են , իբր սատանայի և մե ղաց ծնունդք են .

Այսինքն , նոցա բերանքն միշտ ստութի և խաբէութիւն խօսե ցան * և նոցա ձեռքն մեղագոր ծութե և խորամանկութեան յեռնէ են .

Այսինքն , որ ես ազատելով

'ի ձեռն

՚ի ձեռն չէ՞ մի որդւոյ քո ՚ի սատանայէ ՚ի մեղաց և ՚ի բռնութե անօրինաց զնոր օրհնութի երգեմ քեզ ․ իբր քրիստոնէական երգովք բարեբանեմ զքեզ * և տասն թելէ սաղմ քեզ սաղմոս ասեմ , կատարելով զտասն պատուիրանս օրինացն քոց ․

Այսինքն , զեր է ով է որ մեր թագաւորացն փրկութի կու տայ , իբր ով է որ զՔս առաքեալքն կու փրկէ ՚ի ձեռացախտութենէն սատանայի և կամարարաց նորա , եթէ ոչ դու * կամ ով է որ փրկեցոյց զԴաւիթ ծառայ իւր ՚ի չար թրէ , իբր ով է որ կու ազատէ զքրիստոսադաւանեալսն յՅս Քս ՚ի չար լեգէոնէն Հրէից , և ՚ի բռնութենէ սատանայի , եթէ ոչ դու ․

Այսինքն , ուրեմն փրկէ զիս , և ազատէ յայնպիսի մարդկանց ձեռքէն , որ օտարաց որդիք են , իբր սատանայի և մեղաց ծնունդք են ․

Այսինքն , նոցա բերանքն միշտ սուտ թի և խաբէութիւն խօսեցան * և նոցա ձեռքն մեղաւորաց ծնութեան և խորամանկութեան լցեալ են ․

Այսինքն , նոցա որդիքն նորատունկ ծառերի նման աճողու և ուրախութե մեջումն մեծացեր են իւրեանց տղայութենն իւեր





Նոր օրհնեցից զքեզ * տասնաղեան սաղմոսարանաւ սաղմոս ասացից քեզ ․

Որ տաս փրկութի թագաւորաց մերոց * որ փրկեցեր զԴաւիթ ծառայ իւր ՚ի սրոյ չարէ ․

Փրկեա՛ զիս և ապրեցո՛ զիս ՚ի ձեռաց որդւոց օտարաց ․

Որոց բերանք իւրեանց խօսեցան զնանրութի * և աջ նոցա աջ է մեղաց ․

Որոց ուստերք իւրեանց որպէս տունկք հաստատեալք են ՚ի մանկութե իւրեանց

* դստերք նոցա զարդարեալք և պաճուճեալք ՚ի նմանութիւն տաճարի.

Շտեմարանք նց լի են և բղխեն ՚ի միմեանս * խաշինք նց բազմածինք են և բազմանեան ՚ի գնացս իւրեանց * և անդեայք նց պարարտք են.

Ոչ գոյ խրամատութիւն ցանկոյ նց * և ոչ աղաղակ ՚ի հրապարակս նոցա.

Երանեցին զժողովուրդն որոյ այս այսպէս է * երանի ժողովրդեան որոյ Տր Ած է նց.

Տուն : 16.

Օրհնութիւն սաղմոս դաւթի

Սաղմոս : ՃԽԴ.



* Նոցա դստերքն զարդարած և պաճուճած են, իբր ոսկեթել և մարգարտաշար շորեր են հագած կռոց տաճարների նման.

Այսինքն, նոցա ամբարներն և մառաններն այնչափ լցուեր են աշխարհիս բարութեամբ և առատութեամբ, որ մէկէն ՚ի միւսն կու կրեն կրկին * Նոցա ոչխարներն միշտ ծնանելոյ յեանկ են, և երբոր արօտ կու երթանեն կու բազմանան * և նոցա եզներն գէր և պարարտ են.

Այսինքն, նոցա պարտէզներն և այգեաց պատերուն ամեներն փլած տեղ չիկայ * և նոցա քաղաքի մէջուն աղաղակ և կռիւ չի լսվեր.

Այսինքն, այդ երանի տամ միես այնպիսի ժողովրդեան, քանզի * այլ մանաւանդ երանի այնպիսի ժողովրդեան կասեմ որ զՏէր Ածն երկնի և երկրի կու պաշտէ, և զնորա օրէնքն և պատուիրանքն կու կատարէ.

Իբր զայս սաղմոսս ասաց դաւիթ վասն օրհնելոյ զԱծ.

Այս սաղմոսաւս կու օրհնէ և կու փառաւորանէ մարգարէն զԱծ վասն անչափ բարերարութեան նորա.

Այս

Բարձրացուցից զքեզ ած իմ եւ թագաւոր իմ * եւ օրհնեցից զանուն քո յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից.

Ո՛վ տէրն , կու բարձրացուցանեմ եւ կու փառաւորեմ զքեզ պատուելով եւ քարոզելով զքո բարեգթութիւնդ բոլոր աշխարհին , ած իմ , զէրէ դու ես որ ստեղծեր ես զիս 'ի յոչինչէ , եւ թագաւոր իմ , զէրէ դու ես որ կու կառավարես զհոգի եւ զմարմին իմ * եւ կու օրհնեմ եւ կու գովեմ զքո սուրբ անունդ յաւիտեանս յաւիտենից , իբր միշտ եւ հանապազ.

Զօր հանապազ օրհնեցից զքեզ * եւ գովեցից զանուն քո յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից.

Ո՛վ տէրն , ես զօրն 'ի բուն հանապազ պարտական եմ որ օրհնեմ զքեզ * եւ գովաբանեմ զքո բարանելի անունդ , վասն քոյ անչափ բարերարութեանդ եւ անյիշաչարութեանդ յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից.

Մեծ է տէր եւ օրհնեալ է յոյժ * եւ մեծութեան նորա ոչ գոյ չափ.

Ո՛վ տէրն , զէրէ մեծ է ամենակարողութիւն եւ ամենաբարութիւն քոյ եւ օրհնեալ է յամ արարածոց յերկնեղեաց եւ յանկրելութիւց * եւ նորա մեծութեանն չափ չկայ , զէրէ բոլոր աշխարհս իւր միջումն պարունակեր է , իբր ընդ ամ տեղիս է տէրութիւն նորա.

Ազգ եւ ազգ գովեսցեն զգործս քո * եւ զզօրութիւն քո պատմեսցեն.

Ո՛վ տէրն , ամ ազգ եւ ազինք երկրիս կու գովեն զքո զարմանալի ստեղծագործութիւնդ եւ բարերարութիւնդ * եւ քո ամենակարող զօրութիւնդ միշտ կու պատմեն.

Զմեծ վայելչութիւն փառաց սրբութեան քո խօսեսցին * և զսքանչելիս քո պատմեսցեն.

Զզօրութիւն ահի քոյ ասասցեն * և զմեծութիւն քո պատմեսցեն.

Զյիշատակ բազում քաղցրութեան քոյ բղխեսցեն * և արդարութեամբ քով ցնծասցեն.

Գթած ողորմած է Տր * երկայնամիտ և բազումողորմ.

Քաղցր է Տր ամենեցուն * և գթութիւնք նորա ի վերայ ամ արարածոց իւրոց.

Խոստովան եղիցին առ քեզ Տր ամենայն գործք քո * և սուրբք քո օրհնեսցեն զքեզ.



Այսինքն, զքո սրբութեան փառաց մեծ վայելչութիւնն հանապազ՝ ի բերան կու ունենան և կու խօսին * և զքո սքանչելագործութիւնդ անդադար կու պատմեն աշխարհի.

Այսինքն, քոյ ահիդ և քոյ երկիւղիդ սարսափելի զօրութեանն՝ ի բերան կու ունենան և կասեն ամենեցուն * և զքո անչափ մեծութիդ և կարողութիդ հանապազ կու պատմեն.

Այսինքն, քոյ առատ ողորմութեանդ և քաղցրութեանդ յիշատակն կու բխեն յիւրեանց բերանէն և կու բարբառեն * և զքո արդար դատաստանդ մտածելով միշտ կու ցնծան.

Այսինքն, և կասեն, թէ գթած ողորմած է Տր Ած * երկայնամիտ է և բազումողորմ.

Այսինքն, քաղցր է Տր Ած առ ամ մարդիկք որ ուղիղ սրտով կու աղաչեն առ նա * և նր գթութիւն միշտ իւր ստեղծուածոցն վերայ է.

Այսինքն, քո ամէն գործքդ և արարմունքդ Տր Ած, զքո անչափ բարութիդ և իմաստութիդ կու յայտնեն և կու խոստովանեն * և քո սուրբքդ և ընտրեալքդ զքեզ կու օրհնեն և կու գովաբանեն.

Այս

Այսինքն, քո երկնային թագաւորութեանդ փառքն և վայելչութիւն միշտ 'ի բերան ունին և կասեն միմեանց հետ * և քո անչափ զօրութեանդ կու պատմեն և կու քարոզեն.

Այսինքն, որ յորդւոց յորդիս ծանուցանեն մարդկանց զքո ամենայն զօրութիւնդ * և զքո թագաւորութեանդ մեծ վայելչութիւն և զանճառելի պատիւն.

Այսինքն, և խնամոն որ քո թագաւորութիւնդ ամենայն յաւիտենից թագաւորութիւն է, իբր յաւիտենական և անվախճան թագաւորութիւնն է * և քո տէրութիւնդ և իշխանութիւնդ յազգէ մինչև յազգ է.

Այսինքն, և ասեն իւրեանց մարդոց միջումն, թէ հաւատարիմ է տէր ասածով իւր խօսքումն և իւր խոստմունքումն * և իւր ամէն գործքումն սուրբ և արդար է, իբր իւր արարածոց միջումն ամենեւին անիրաւութիւն չէ գտնիր.

Այսինքն, նա է որ կու հաստատէ զամենայն գայթակղեալս, իբր նա է որ կու յուսադրէ և կու միսիթարէ զթերացեալս, և զյուսահատեալս * և նա է որ կու կանգնեցուցանէ զամենայն գլորեալս, իբր նա է որ իւր երկնային շնորհաց

Զփառս արքայութեան քոյ ասասցեն * և զզօրութիւն քո պատմեսցեն.

Ծանուցանել որդւոց մարդկան զզօրութիւն քո * և զփառս մեծ վայելչութեան արքայութեան քոյ.

Արքայութիւն քո արքայութիւն ամենայն յաւիտենից * և տէրութիւն քո յազգէ մինչև յազգ.

Հաւատարիմ է տէր յամենայն բանս իւր * և արդար է յամենայն գործս իւր.

Հաստատէ տէր զամենայն գայթակղեալս * և կանգնէ զամենայն գլորեալս.

Աչք ամենեցուն ՚ի քեզ յուսան * և դու տաս կերակուր նոցա ՚ի ժամու.

Բանաս զձեռն քո * և լցուցանես զամենեսեան քաղցրութբ կամօք քովք

Արդար է տր յամ ճանապարհս իւր * և սբ է յամ գործս իւր.

Մերձ է տր առ ամենեսեան որք կարդան առ նա * առ ամենեսեան որք կարդան առ նա ճշմարտութբ.

Զկամս երկիւղածաց իւրոց առնէ տր * աղօթից նոցա լսէ և կեցուցանէ զնս.

Պահէ տր զամենեսեան որք սիրեն զնա * և զամ մեղաւորս

օգնութեամբ կու զօրացուցանէ զանկեալս ՚ի մեղս, և կու առաջնորդէ նոցա ՚ի ճանապարհս փրկութե.

Այսինքն, ամենեցուն աչքն դէպ քեզ կու նայի և ՚ի քեզ է յուսացեր * և դու կու տաս նց հոգևոր և մարմնաւոր կերակուրն իւր ժամանակին.

Այսինքն, դու քո ածայքն և հայրական ձեռքդ կու բանաս * և կու կերակրես զամենեսեան քո քաղցրութեդ և քո օրհնութեդ լուս կամաց քով.

Այսինքն, արդար է տր ած իւր ամէն օրինաց և պատուիրանաց ճանապարհուն * և սուրբ է իւր ամէն գործոց և արարմանց մէջումն.

Այսինքն, մերձ է տր ած իւր օգնութեն ամ մարդկանց որ դէպ առնա կու աղաղակեն * բայց մանաւանդ այնպիսի մարդկանց որ կու աղաղակեն առնա ուղիղ սրտիւ և ճշմարտութբ.

Այսինքն, ած միշտ իւր երկիւղած ծառայից կամքն կու կատարէ * և նոցա աղօթիցն և խնդրուածոցն կու լսէ, և զերբեմնց հոգին կու կեցուցանէ.

Այսինքն, տր ած կու պահէ և կու պահպանէ այնպիսի մարդիկն որ ուղիղ սրտով կու սիրեն

զինքն * և ամբարիշտ և մեղաւոր մարդիկն կուսատակեցուցանէ և կուկորուսանէ .

Ա՛յսինքն , ուստի իմ բերանս միշտ Այ օրհնութիւն կուխօսի և կուբարբառի * և ամ կենդանիք կուգովեն և կուփառաբանեն զնորա սուրբ և երկրպագելի անունն յաւիտեանս և յաւիտեանս յաւիտենից , իբր միշտ և հանապազ .

Իբր այս սաղմոսիւս օրհնեցէք զԱծ վասն ազատութեան Անգեայ և Զաքարիայ ՚ի գերութենէն իւրեանց .

Այս սաղմոսումս կու խրատէ մարգարէն զհաւատացեալս դնել զյոյս իւր առ Ած և ոչ ՚ի մարդիկ .

Այսինքն , ո՛վ անձն իմ օրհնեա որ քու ուժդ և կարողութիւնդ է օրհնէ զԱծ * զերբ ես դրի իմ մտաց մէջն որ քանի կենդանի եմ , օրհնեմ և փառաբանեմ զԱծ * և քանի որ կամ այս աշխարհիս մէջ սրտի մտօք իմ Այ առաջին սաղմոսերգութին անեմ .

Այսինքն , և դուք ո՛վ մարդիկ մի՛ յուսայք իշխանաց և թագաւորաց յօգնութիւն * և մի՛ ապա

ւինիք



սատակէ Տէր .

Օ՛րհնութիւն Տն խօսեսցի բերան իմ * օրհնեսցէ ամ կենդանի զանուն սուրբ նր յաւիտեանս և յաւիտեանս յաւիտենից .

Փառք . 22 .

Ալէլուիա ալէլուիա և զա բերեալ :

Սաղմ . ՃԽԵ .

Օրհնեա՛ անձն իմ զՏր * օրհնեցից զՏր ՚ի կեանս իմ * սաղմոս ասացից Այ իմոյ մինչև եմ ես .

Մ՛ի յուսայք յիշխանս * և մի՛ յորդիս մարդկան * զի ո՛չ գոյ փր

կութիւն ՚ի նոսա.

Ելցէ հոգի ՚ի նոցա նէ և դարձցին անդ րէն ՚ի հող * և յայնմ աւուր կորիցեն ամ խորհուրդք նց.

Երանի ազգի որոյ Տր ած յակոբայ օգնա կան է նմա * և յոյս նր ՚ի Տր ած է.

Որ արար զերկինս և զերկիր զծով * և զամ որ է ՚ի նոսա.

Որ պահէ զճշմար տութիւն յաւիտեան * և առնէ իրաւունս զրկելոց.

Տայ հաց քաղցելոց * և արձակէ զկապեալս Տր.



ունիք հողեղէն և մահկանացու մարդկանց յուսադրութիւն * զի ըն ՚ի նոցանէ ոչ իւրեանց և ոչ ձեզ փրկութիւն չկայ.

Այսինքն, կու ելանէ նոցա հոգին հրամանաւն այ ՚ի մարմնոյ նց և նմանապէս որ ՚ի հողէ են ստեղծած այնպէս ՚ի հող կու դառնան * և այն օրն կու կորնչի նոցա ամէն խորհուրդն և դիտաւորութիւնն.

Այսինքն, երանի այնպէս ազգին որ Տր ածն յակոբայ, իւր ստեղծօղն երկնի և երկրի իւրն օգնական և պահապան է * և իւր յոյսն միայն յած է դրեր, և ոչ ՚ի մարդ.

Այսինքն, ՚ի յայն ածն կասեմ որ արարեր է զերկինս և զերկիր և զծով ՚ի յոչնչէ * և զամ ինչ որ ՚ի յերկնքումն ՚ի յերկրումն և ՚ի ծովումն կու գտանին, թէ կենդանիք և թէ անկենդանք, թէ մարմնաւորք և թէ անմարմինք.

Այսինքն, ՚ի յայն ածն կասեմ որ զիւր բանից և խոստմանց ճշմարտութիւն յաւիտեանս յաւիտենից հաստատուն կու պահէ * և խղճերի և զրկածների իրաւունք և արդար դատաստան կանէ.

Այսինքն, նա է որ աղքատաց և կարօտելոց հոգևոր և մարմնաւոր հաց կու տայ * և կապուած և գերի անկած մարդիկն թէ ՚ի

բանութենէ մարմնաւոր եղեանաց, և թէ 'ի բանութէն սատանայի կու արձակէ և կու ազատէ. Ս՛ասինքն, նա է այն տէրն որ հոգւով և մարմնով կուրացելոց աչքն կու բանայ և նոցա ճանապարհ ճշմարտութեան կու ցուցանէ * նա է այն տէրն որ գայթակղութեան գլորած և 'ի մէջ մեղաց խորտակած մարդիկն 'ի ձեռն ապաշխարութեան ոտից վերայ կու կանգնեցուցանէ.

Տէր բանայ զաչս կուրաց * և կանգնէ զգլորեալս տէր.

Ս՛ասինքն, նա է այն տէրն որ կու սիրէ արդար և միամիտ մարդիկն * կու պահէ և կու պահպանէ ընպանդուխտս, երբ զատարականս * զորբերն և զայրիքն կու ընդունի և կու նախախնամէ * և ամբարիշտ և անօրէն մարդկանց չարահնարութեան ճանապարհն կու կորուսանէ.

Տէր սիրէ զարդարս * տէր պահէ զպանդուխտս * զորբս և զայրիս ընդունի տէր * և զճանապարհս ամբարշտաց կորուսանէ.

Ս՛ասինքն, վասն որոյ ուրախ լեր ով սիոն մայր եկեղեցի զերէ քո ճշմարիտ ածդ և փրկիչդ յաւիտեանս յաւիտենից թագաւորութիւն կանէ յազգէ մինչև յազգ և թագաւորութիւն նոր վախճան չի ունենար.

Թագաւորեսցէ տէր յաւիտեան ած քո սիոն յազգէ մինչ ցի յազգ.

Տուն : 10

Իբր, այս սաղմոսիս օրհնեցէք զած վասն ազատութեան և դարձմանն անգերոյ և զարարերոյ 'ի յերուսաղէմ.

Ալէլուիայ անգեայ և զաքարեայ:

Սաղմ. ՃԽԶ.

Օրհնեցէք զՏէր զի բարի են սաղմոսք * Այ մերում քաղցր եղիցի օրհնութիւն.

Շինէ զԵրուսաղէմ Տէր * և զցրուեալսն Իսրայէլի ժողովէ.

Բժշկէ զբեկեալս սրտիւ * և պատէ զամ վէրս նոցա.

Թուէ զբազմութիւն աստեղաց * և զամենեսեան զնոսա յանուանէ կոչէ.



Այս սաղմոսով կու յորդորէ մարգարէն զհաւատացեալս օրհնել զԱծ.

Այսինքն , օրհնեցէք զՏէր ով հաւատացեալ ժողովուրդք սաղմոսերգութեամբ , զերբ խիստ լաւ կու թուի Այ առաջին սաղմոսերգութիւնն * և ձեր օրհնութիւնն և գովութիւնն Այ առաջին քաղցր և հաճելի կու լինի.

Այսինքն , զերբ կու շինէ Տր Ած զԵրուսաղէմ , իբր զՏր եկեղեցի 'ի կենդանի և 'ի բանական քարանց * և զցրուեալ Իսրայէլացւոց ժողովուրդն , իբր զնոր հաւատարիմ և ընտրեալ ծառայքն կու ժողովէ նորա մէջն.

Այսինքն , կու բժշկէ զվիրաւորած սրտաւ , իբր զզղջացած և զխղճահար եղած մարդիկն * և նոցա խոցերին վերայ դեղ կու դնէ , և կու կապէ , իբր Նա սրտի տխրութիւնն կու փարատէ և կու մխիթարէ.

Այսինքն , Նա կու թուէ զբազմութիւն ընտրելոցն որք կու փայլին իբրև զաստեղս արքայութեան երկնից * և իւր անչափ իմաստութեամբ Նա ամենեցուն անուանն գիտէ , և ըստ իւրաքանչ իւրոց արժանաւորութեանցն նոցա փառք կու տայ յարքայութիւն իւրում.

Այս

Նախնիքն, զերե մեծ է տր ած և մեծ է նորա ամենակարող զօ րութիւն * և նորա իմաստութեան չափ չկայ.

Նախնիքն, կու ընդունի և կու սիրէ տր ած հեզ և խոնարհ մար դիկն * և կու խոնարհեցուցանէ և կու ցածացուցանէ զհպարտ և զամբարտաւան մարդիկն մինչև յերկիր.

Նախնիքն, արդ ով հաւատաց եալք օրհնեցէք զտր ած խոստո վանելով նորա անչափ բարութիւն * և սաղմոս ասացէք նմա օրհնու թբ և գովութբ.

Նախնիքն, այն տրն կամէ որ զգեցուցանէ զերկինս, երբ զառաք եալքն ած այլին գիտութե անհա սուն * և պատրաստեց զանձրև իւր յերկիր, երբ զանձրև առն առանձնական քաղցրութե եկե ղեցւոյ իւրոյ որդոյ.

Նախնիքն, այն որ լեռներումն խոտ բուսոյց, երբ եկեղեցւոյ վարդապետացն ած այլին օրինաց և պատուիրանաց գիտութբն հարս տացոյց * և անձնապահական կանանց և զալար քաղցրութբն առատացոյց ՚ի կերս փրկութե ազգի մարդկան.

Նախնիքն, այն որ անասնոց կե րակուր կու տայ, երբ զմարմնս և զզգեստս աշխարհիս կու կոչէ ՚ի

Սաղմոս 739

Մեծ է տր մեր և մեծ է զօրութի նր * իմաստութե նորա ոչ գոյ թիւ.

Ընդունի զհեզս տր * և խոնարհ առնէ զամբարտաւանս մին չև յերկիր.

Օրհնեցէք զած խոս տովանութբ * սաղ մոս ասացէք նմա օրհնութբ.

Ո՛ զգեցուցանէ զերկինս ամպովք * և պատ րաստ արար զան ձրև իւր յեր կիր.

Բուսոյց զխոտ ՚ի լե րինս * և զդալարի ՚ի ծառայութի մարդկան.

Ո՛ տայ անասնոց կե րակուր * ձագուց ագռաւուց որք կար

դան առ նա ։

Ոչ թէ ընդ զօրու-
թիս ձիոյ կամեցա-
ւոր * եւ ոչ ընդ երանս
առն հաճոյի հա-
ճեցաւ ։

Նայ հաճեցաւ որ
ընդ երկիւղածս իւր
* եւ ընդ այնոսիկ ոյք
յուսան յողորմութի
նորա ։

Տունք. 12.

[illegible]

Սաղմ. ՃԽԷ.

Գովեա երուսաղէմ
զՏէր ։

գիտութին Հնձաւորութեն , եւ իւր ամենայնին քաղցրութենն կու կերակրէ զինքրեանք * եւ ագռաւուններին ձագերին , իբր մեղօք սեւացեալ մարդկանց զարմն եւ զաւակն 'ի ձեռն ապաշխարութեն կու ընդունի , եւ իւր ամենայնին շնորհացն մասնակից կանէ ։

Այսինքն , զերէ չէ թէ ձիոյ ուժն եւ կարողութին , իբր ամբարիշտ մարդկանց զօրաւորութին եւ հպարտութին դուրս կու գայոյ * կամ թէ հեծոյ եւ քաջ մարդկանց հաստ երանեկրին եւ անդամներին , իբր մեծամեծհանձրաւ մարդկանց քաջութենց եւ զարմանալի գործոցն հաճեցաւ ած ։

Այսինքն , այլ հաճեցաւ իւր երկիւղած եւ ճնազանդ ծառայիցն * եւ այնպիսի մարդկանցն որ միայն իւր ողորմութեն են յուսացեր եւ ապաւիներ ։

Իբր , այս սաղմոսիս օրհնեցէք զած 'ի բերանոյ անգեայ եւ զաքարեայ մարգարէից , զի ալէլուիայն օրհնեցէք զած կու թարգմանի ։

Այս սաղմոսս կու յորդորէ մարգարէն զՍիոն եւ զքաղաքն երուսաղէմ օրհնել եւ գովել զած ։

Այսինքն , գովէ՛ ով երուսաղէմ Տէրն աստուածին զՏէրն եւ զաստուածն քո ։

Այս

Սիովնն, եւ օրհնէ եւ փառաբանէ ի մէջ նորա սիոն մայր եկեղեցի զՏէր Ած փրկիչն քո.

Սիովնն, զերէ ամրացոյց Ած ի մէջ Երուսաղէմի հրէաստանի զքո դռներիդ նիգերն եւ փակերն * եւ օրհնեաց եւ բազմացոյց զքո հաւատացեալ որդիքդ եւ զաւակներդ քոյ մխիթարութ.

Պարածեալ զօրացոյց եւ հաստատեց ի մէջ եկեղեցի զքոյ առաքելոց եւ վարդապետաց երկնային իշխանութիւն * եւ օրհնեց եւ բազմացոյց զքո հաւատացեալ որդիքդ ի քեզ։

Սիովնն, այն որ քոյ սահմաններիդ եւ քոյ գաւառներիդ բոլորն խաղաղացոյց ի մէջ Երուսաղէմի հրէաստանի, եւ զքեզ քոյ թշնամեաց պատերազմէն եւ բռնութենէն ազատեց * նոյնն զքեզ հարստացոյց առատութեամբ ցորենոյ եւ հացի.

Պարածեալ այն որ քո բովանդակ հնազանդեալ ազգք եւ ազինքդ հաւանեցոյց ընդ հօրն երկնաւորի ի մէջ եկեղեցի * նոյնն պարարտութեամբ ածայնոյ հացի մարմնոյն իւրոյ յագեցոյց զքեզ։

Սիովնն, նա կու ուղարկէ զիւր խօսքն յերկիր ի մէջ Երուսաղէմի հրէաստանի, իւր կու յայտնէ զիւր բարեհաճութիւնն երկրի եւ երկրայնոց

եւ շու



Եւ օրհնեա՛ զԱծ քո սիոն.

Զի զօրացոյց զնիգս դրանց քոց * եւ օրհնեաց զորդիս քո ի քեզ։

Որ եդ զսահմանս քո խաղաղութիւն * պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ։

Առաքէ զբանն իւր յերկիր * վաղվաղ ընթանայ պատգամք նորա.

Դնէ զձիւն որպէս զասր * և զմէգ ոպ͞ փոշի ցանեաց.

Արկանէ զսառն ոպ͞ պատառս * առաջի ցրտոյ նր͞ ո՛ կարէ կալ.



և շուտով կու վազեն իւր պատգամքն, ինչ շուտով կու կատարին իւր հրամանքն, և նոյն արարածք իւրին կու հնազանդին.

Դարձեալ, նա կու ղրկէ ո՛վ մայր եկեղեցի զիւր բանն ամ͞ն յերկիր առ 'ի մարմնանալ * և շուտով կու վազէ իւր ամենատարածական քարոզութիւնն և կու տարածի յարևելից մինչև յարևմուտս.

Նա յետինքն, նա կու դնէ զիւր ձիւնն ձերմակ բուրդի նման ո՛վ Երուսաղէմ Հրէաստանի երկրիս վերայ * և զիւր ամպերն փոշու նման կու ցանէ օդիս վերայ.

Դարձեալ, նա կու դնէ զիւր Սրբութիւն շնորհն ո՛վ մայր եկեղեցի քեզ վերայ, և քո որդիքդ պայծառ զգեստով կու զարդարէ * և նոյն մնաց մոլորութիւն մութն և խաւարն փոշու նման կու ցրուէ, որ կարենան տեսանել զլոյս ա͞ծգիտութն.

Նա յետինքն, նա կու թափէ սառուցի կտորտանքն ո՛վ Երուսաղէմդ Հրէաստանի երկրիս վերայ * և նոցա ցրտին առաջեւն ո՛վ կարէ դիմանալ.

Դարձեալ, նա կու տայ 'ի ձեռն մովսէսի ո՛վ մայր եկեղեցի ժողովրդեանն իսրայէլի զպատուիրանս հին օրինաց, որ վասն դժուարիմացութեան սառուցի կտորտանաց

Նման

նման կարծր իւր պինտ էին * և այն օրինաց ցուրտ խոսքերի առաջեն ով կարէ կենալ, իւր ով կարէ արդարանալ.

Սակայն, նա կու ողորկէ զիւր բանն իւր զիւր հրամանքն ով երուսաղէմ հրէաստանի և կու հալէ զսառուցն * և կու փչեն հարաւային ջերմ քամիքն, և կու բղխանուն սառուցներէ ջրերն վազել.

Դարձեալ, նա կու ողորկէ ով մայր եկեղեցի զիւր բանն ած ՚ի մայր միաստութի, և նոյնա կու լուծանէ և կու մեկնէ մեզ խորհրդաւորապէս զպատուիրանս հին օրինաց * կու փչեն քաղցր քամիք իմաստութն և գիտութն հոգւոյն սրբոյ, և կու բղխանին ած դժուարութիւնք փոխարկել ՚ի հեշտութն, և հեղուլ զշնորհս ՚ի հոգիս և ՚ի միտս ժողովրդապէս պահողացն զնոյն.

Սակայն, կու պատմէ իւր օրինաց և պատուիրանաց բանն ով երուսաղէմ հրէաստանի յակոբայ զարմին * և իւր դատաստանն և իրաւունքն իսրայէլացւոց ազգին.

Դարձեալ, կու պատմէ զիւր աւետարանական քարոզութին ով մայր եկեղեցի հաւատացեալ քրիստոնէիցն * և զիւր արդա

Տուացէ զբան իւր և հալէ զնոսա * շնչեսցեն հողմք և գնասցեն ջուրք.

Պատմէ զբան իւր յակոբայ * զարդարութիւն և զիրաւունս իւր իսրայէլի.

Չէ այսպէս արար ամ՛ ազգաց որ ✻ և զդատաստանս իւր ոչ յայտնեաց նց.

Տ-ւք : 10.

Աղօթք ամբակումայ մարգարէին : 3.

Տէր զլուր քո լուայ, և երկեայ ✻ տր նայեցայ ՚ի գործս քո և զարհուրեցայ.



րութիւնն և իրաւունքն նոր իս րայելի.

Այսինքն, ոչինչ ազգի այսպէս բարերարութիւն չարար ամ՛ ոչ երուսաղէմի հրէաստանի ✻ և զիւր դատաստանն չէ յայտնեաց նոցա.

Պարձեալ, ոչինչ ազգի այսպիսի շնորհս և ողորմութիւն չարար ամ՛ ոչ մայր եկեղեցի ✻ և զայն անձն ուելի և անքննելի դատաստանն որ արար վասն փրկութեան ազգի մարդկան ՚ի ձեռն մարդեղութեան որդւոյ իւրոյ միածնի բեր մեզ միայն յայտնեաց և ոչ այլոց.

Այս աղօթքումս կուխօսի մար գարէն ՚ի քերթանող եկեղեցւոյն.

Այսինքն, տր յո՛ քո ես զքո զարմանալի համբաւդ ազդմամբ հոգւոյն որ բը լսեցի և վախեցայ, իբր խնայող որ զուխնարհելոց ես յերկնից ՚ի յերկիր, և հզօր ձեռամբ յաղթահարելոց ես զսատանայ, և քակելով զդժոխս ազատելոց ես զազգ մարդկային ՚ի բանութե նորա, և ՚իբր ամենակարող զօրութենէդ և ՚ի հզօր իշխանութէդ վախեցայ ✻ տր յո՛ քո նայեցայ քո արարած գործքերն, իբր անեսի զքո անչափ

բարե

բարերարութիւնդ , որ վ՛ս փրկու-
թեան ազգի մարդկան զծառայի
կերպարանս ստրկի զգենուլ ,
ընդ մարդկան կենցաղավարիլ ,
զճանապարհ կենաց քարոզել ,
զնշանս և զարմանս ցուցանել ,
և երախտամոռաց յազգէն Հրէից
տանջիլ անողորմաբար չարչարիլ ,
խաչիլ և մեռանիլ , և ես 'ի մխ
զարհուրեցայ .

Ո՛վ սքանչելիքն , զոր տր յս քս 'ի
մէջ երկուց կենդանեացն կուծա-
նայլխս , իբր 'ի ծննդեանն քո մար-
մնոյ 'ի կուսէն մարիամայ մերձ
'ի բեթղեհեմ քաղաքն , 'ի մարգա-
բայն Հովուաց , 'ի մէջ եզինն և
իշոյն , քո երկրպագելի փառքդ և
կենցաղավարութիւնդ կուծանայ-
լի , զերբ եզնունք զքո Համբերու-
թիւնդ զերկրպագանութիւնդ զնե-
զութիւնդ և զաղքատութիւնդ
կուխճանաց , և իշոյն զքո խո-
նարՀութիւնդ և զՀեզութիւնդ կու-
ճանաչեմք , ըստ յոՀաննու որ
ասէ առեք զլուծ իմ 'ի ձեզ , և
ուսարուք յինէն զի Հեզ եմ և
խոնարՀ սրտիւ .

Դարձեալ 'ի մերայ խաչին 'ի մէջ
երկուց աւազակացն որոց մի ո՛յ և
թագաւոր փառաց կուճանաչիս
քո ատմայն բանիւքդ , որ ասա-
ցիր , Հայր 'ի ձեռս քո յանձն առ-
նեմ զՀոգի իմ , այսօր ընդ իս





'Ի մէջ երկուց կեն-
դանեաց ծանիցիս
դու * 'ի մերձենալ
ամացն յայտնեսցիս ,
և 'ի Հասանիլ ժա-
մանակին եր
ևեսցիս .

՚Ի Քրիստոսի անձին խեղց * ՚ի ժամանակին բար կութե զզգոնու թե սկսեցաւ.

ինչս ՚ի դրախտին , դու երբոր չորս հարիւր տարին կու մտնես նայ ՚ի վերանորոգութեն երուսաղեմայ որ եղև ՚ի ժամանակս արտաշխսի պարսից թագաւորին, ըստ վկայութեն և երկու շաբաթուցն գտանելէն , կու յայտնելիս մարմնով աշխարհի * դու երբոր քոյ ամենայն նախասահմանութե ժամանակին կու հասանի , որ աս կէք և մարդկութեք կու վեր քաշան , և կու պահպանին թագաւորք և իշխանք ՚ի ցեղէն յուդայի կու երևիս մարմնով ՚ի մէջ մարդկան և կու զգենուս զկերպ ծառայական .

Ասիփերն , այն ժամանակն, որ իմ հոգիս ՚ի մէջ վշտաց և տառապանաց աշխարհիս , իմէջ հոգոց և չարաչարանց , ՚ի մէջ աղետից և մեղուցութեանց ՚ի մէջ խռովայդխտութե , և ՚ի մէջ բռնաւորաց մահու խռովեալ կու սպանայի ոչ գտանելով զմայր փրկութե հոգւոյ իմոյ * այն ժամանակին կասեմ, որ ես քո ամենայն բարկութեդ և սրտմտութեդ , քո ամենայն պատժից և պատուհասից արժանի կու լինիմ , դու քո անչափ գթութեդ և անչափ մարդասիրութեդ զքո ողորմութեդ կու յիշես և կու մտածես , և զիս ՚ի ձեռան մարդագութե քոյ և չար

չարանաց, 'ի ձեռն խաչի քո և մահուան կու փրկես և կու ազատես 'ի դատապարտութենէ դժոխոց և երկնային փառացդ ժառանգորդ կանես.

Այսինքն, լուարուք սուրբեն ով Հաւատացեալք, զի Յս Քս որդին այ 'ի Հարաւոյ կուգայ, երբ կու ծնանի 'ի բեթղեհեմ քաղաքի, որ կայ շինեալ 'ի Հարաւակողմն երուսաղէմայ * և նոյնինքն Յս Քս միայն սուրբն և միայն տէրն, 'ի փարան լեռնէն կու երևի որ է մերձ 'ի լեռան սինայ, երբ Յս Քն որ ծնանելոց է 'ի բեթղեհեմ քաղաքի, է նոյն տէրն որ 'ի սինէական լեռան ետ զօրէնս 'ի ձեռն մովսէսի.

Այսինքն, կու յայտնեն երկինք զվայելչութիւն փառաց նր, երբ երգելով հրեշտակք զփառս 'ի բարձունս 'ի ծննդեան նր, կու յայտնեն աշխարհի զփառաւորութիւն նր, և աստղն լուսաւորեալ և հրաշալի առաջնորդելով մոգուցն կու յայտնէ ազգաց և ազանց զանքննելի տէրութիւն նորա, այլև առաքեալք որք են երկինք կու պատմեն և կու քարոզեն մարդկան զանճառելի տնօրէնութիւն նր * և նր օրհնութեամբն լցեցաւ բոլոր աշխարհ, երբ արարածք ամ սկսան օրհնել և գովել զնա.



Ած 'ի Հարաւոյ եկեսցէ * և սրբն 'ի Փարան լեռնէ.

Ծածկեաց երկինս զվայելչութիւն փառաց նր * և օրհնութեամբ նր լցան տիեզերք.

